

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهولمتن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

ԻԸ ՏԱՐԻ, 2009, ԹԻԻ 12 (330) VOL. XXVIII N° 12

السنة الثامنة والعشرون - العدد الثاني العشر

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 14ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ



ԳՈՐՏՈՊԱՍ

ՀԱՐԱԻԱՅԻՆ
ԱՄԵՐԻԿԱ



ԹԵՀՐԱՆԻ «ԱՐԱՐԱՏ»Ի ԱՂՋԿԱՆՑ ՊԱՏՔԵԹՊՈՒԻ ԽՈՒՄԲԸ ԻՐԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ



**Թեհրանի Հայ Սշակութային «Արարատ»
Կազմակերպության Հանրային Կապ
ԹԵՀՐԱՆ**

29 Յունուար 2010ին, Թեհրանի «Արարատ»ի պաս-քեթպոլի աղջիկները, որոնք արդեն ճանաչում են որպես թռիչքների վարպետներ, իրենց հիացմունք պատճառող ցատկումներով ու վարպետությամբ, կրկին անգամ հրաշք գործելով՝ յաջողական երրորդ տարին լինելով դարձան երկրի ախոյեան՝ Սուպեր լիկայի առաջնակարգ մրցութիւններում:

«Արարատ» կազմակերպության աղջկանց պաս-քեթպոլի խումբը, յաղթահարելով երկրի մակարդակով տեղի ունեցած Սուպեր Լիկայի խաղերին, Ուրբաթ, 29 Յունուարին, 93-63 արդիւնքով յաղթելով «Ֆուլատ Սոպարաբէ Սեփահանի» առաջնակարգ խմբին, դարձաւ դարձեալ երկրի ախոյեան ու մեծ խանդավառութիւն պատճառեց հայ երկրպագուներին:

Իրանի աղջկանց պասքեթպոլի Սուպեր լիկայի մրցութիւններն արդեն մեկնարկուել էին 2009 թուականի Սեպտեմբերից եւ իրանեան 14 խմբեր երթ ու դարձի եղանակով 102 մրցութիւններ անցկացնելով՝ իրենց աւարտին հասաւ Թեհրանի «Արարատ»ի վճռական յաղթականով:

Այսպիսով, Թեհրանի «Արարատ»ը որպէս Իրանի միակ ներկայացուցիչը մասնակցելու է Իրանի Արբիլ քաղաքում տեղի ունենալիք Արեւմտեան Ասիայի գաւաթի խաղերին:

«Արարատ»ի աղջկանց պասքեթպոլի խումբը կիսաեզրափակիչ խաղերին նախապէս յաղթահարել էր «Շերքաթ Նաֆթ Թեհրան» եւ «Սադրայէ Շիրազ» հզօր խմբերին:

29 Յունուարի եզրափակիչ մրցութեան աւարտին, Իրանի աղջկանց պասքեթպոլի ֆետերացիայի նախագահ տիկ. Զարամգաղէն զեկուցելով խաղերի ընթացման մասին, իր եւ ֆետերացիայի անունից շնորհաւորելով «Արարատ»ին, իր պասքեթպոլի խմբի հերթական յաղթանակի համար, յատկապէս շնորհակալութիւն յայտնեց Գ. Մ. «Արարատ» Կազմակերպութեանը՝ խաղերը հիւրընկալելու եւ ֆետերացիայի հետ ունեցած սերտ ու անվերապահ համագործակցութեան համար:

Նա ապա առաջնակարգ խմբերին յանձնեց գաւաթները, հերթաբար՝ «Արարատ»ի (առաջին), «Ֆուլատ Սոպարաբէ Սեփահանի» (երկրորդ) եւ «Սադրայէ Շիրազ»ի (երրորդ) պատասխանատուներին: «Արարատ»ի յաղթանակը յայտարարելուն պէս, հնչեց յաղթական երաժշտութիւն եւ առաստաղից ու յատակից ցրուեցին խանդավառութիւն շարժող հրավառութիւն ու գոյնզգոյն կտորների պար՝ դահլիճում:

Այնուհետեւ Իրանի պասքեթպոլի ֆետերացիաների պատասխանատուների, «Արարատ» կազմակերպութեան Կենտրոնական Վարչութեան եւ մարզական միութեան ներկայացուցիչների միջոցով յաղթած խմբերին տրուեցին մետալիոններ ու գնահատագրեր, ինչպէս նաեւ յուշանուէրներ՝ ամբողջ մրցոյթների իրաւարարներին: Նոյն արարողութեան ընթացքում ծաղիկներ տրուեցին Իրանի մասշտապով աղջկանց պասքեթպոլի վաստակաւոր մարզիկներին:


Վերջում, «Արարատ» կազմակերպութեան Կենտրոնական Վարչութեան փոխ նախագահ Հարմիկ Չովլէ-եանը յանուն Կենտրոնական Վարչութեան շնորհաւորելով խմբի մարզիկներին, մարզիչին ու միւս պատասխանատուներին, յոյս յայտնեց, որ «Արարատ»ի աղջկանց պասքեթպոլի խումբը յաջողութիւն կ'արձանագրէ այս անգամ որպէս Իրանի ներկայացուցիչը Իրանի Արբիլ քաղաքում կայացող Արեւմտեան Ասիայի գաւաթի խաղերին: Իսկ ամենավերջում, մարզիկներն ու երկրպագուները խանդավառ երաժշտութեան ներքոյ, հայկական իսկական խրախճանք ձեւակերպուեց «Արարատ» մարզաւանի «Սասունցի Դաւիթ» սրահում:

«Արարատ»ի անուամբ հրապարակ իջած հերոսուհիներն էին. - Նարինէ Արտաշեան (նաեւ Իրանի հաւաքականի անդամ), Գայիանէ Ազիզեան, Կարին Նով-շադեան, Էղնա Իսայեան (խմբապետուհի, նաեւ Իրանի հաւաքականի անդամ), Վանէ Մուսախանեան, Արի-գա Փուլադեան, Արլին Շահնազարեան, Մելանի Իս-մայիլեան, Հռիփսիմէ Ադամեան, Արլին Յարութիւնեան (նաեւ Իրանի հաւաքականի անդամ), Յասմիկ Մամի-կոնեան, Անայիս Սիրզաթունեան, Նարե Ազնզեան, Օտթէ Աղաջանեան (ընդհանուր պատասխանատու), Ժենիա Սիւքասեան (պատասխանատու), Շայեսթ Սո-թեշարէի (մարզիչ) եւ Ժենիկ Շահբազեան (թեքնիք պատասխանատու):



ԹԻՒՆԻՆ ՆԻՒԹԵՐՆ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مجلّة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي مارزيك



Մարզական ամսաթերթ
 Հրատարակությունը Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 ԻԸ. ՏԱՐԻ, 2009, ԹԻՒ 12 (330)

ԽՄԲԱԳԻՐ
 Կիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ
 Պատրիկ Կիւլպէնկեան
 Աքօ Մոսիկեան

Գօգօ Մկրտիչեան
 Վահան Համամձեան
 Տիրան Շահինեան
 Սալբի Ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Յովհաննէս Մարտոյեան, Րաֆֆի
 Սիւլահեան, Սամուէլ Մկրտիչեան,
 Ներսէս Արք. Բախտիկեան*,
 Գ. Թորոյեան եւ շրջաններու
 թղթակիցներ:

Էջադրում - Ջարեհ Զէօրէքձեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵ
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատաձառնի սակն է 3000 Լ.Ն.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ծշդուած է 35000 Լ.Ն.:

Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Սեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Անդրադարձ 3
- Մեր Տեսակցութիւնները 10
- Յուշ 12
- Պատմութիւն 14
- Մասնաձիւղ Մասնաձիւղ 18
- Մեր Կորուստները 39



18



6

ԲԱԺԻՆՆԵՐ

- Իրագործում 6
- Միջազգային 16



ԱՌԻԹՆԵՐ

Մեր առօրեային մէջ, մեզի ներկայացող առիթները եւ զանոնք օգտագործելու արթնութիւնն ու կարողութիւնը մեզ կ'առաջնորդեն յաջողութեան եւ յաղթանակի:

Պէտք չէ մտածել, որ ուրիշներուն ներկայացող առիթները մեզի ալ չեն ներկայանար: Առիթը կ'այցելէ առողջ ու տրամաբանող ամէն մարդու, բայց երբ զինք դիմաւորողը պատրաստ չի գտներ, խոյս կու տայ ան՝ անմիջապէս ուրիշ մը բախտաւորելու համար:

Կեանքի մէջ առիթներ, բաց լուսամուտներ միշտ կարելի է գտնել, եթէ... տեսնող աչքեր ունենանք: Յարատեւութիւն, աշխատանք եւ նպատակի հետապնդում անպայման ճամբայ մը կը բանան եւ յաջողութեան վերջալոյսին կը հասցնեն մեզ:

Առիթներ եւ կարելիութիւններ միշտ կան, միայն թէ առանց վարանումի եւ տրտունջի պէտք է ձգտիլ դէպի լաւը, լաւագոյնը եւ կատարեալը, առանց դադարի եւ յուսալքումի պէտք է յարատեւել ու յառաջանալ:

Պէտք չէ սպասել ու ակնկալել, որ մեր կեանքի տեւողութեան առիթներ միշտ ներկայանան մեզի, ճամբու երկայնքին հեռաւորութիւն նշող ցուցատախտակներու նման:

Պէտք չէ անպայման սպասել նաեւ մեծ առիթներ: Բաւարար է օգտագործել փոքր առիթները եւ ժամանակի ընթացքին զարգացնել զանոնք:

Առիթները կը ներկայանան մեզմէ իրաքանչիւրին կարողութեան, նպատակին եւ յարատեւութեան համաձայն:

Կեանքը բոլոր մարդոց կ'ընծայէ բաւարար կարելիութիւններ եւ առիթներ՝ զանոնք երջանկացնելու համար: Չախողութիւնները սովորաբար հետեւանքը կ'ըլլան մարդոց անձարակութիւններուն, սխալներուն եւ յանցանքներուն:

Ծոյլերուն համար ոսկի առիթները ոչինչ կ'արժեն, մինչդեռ աշխատասէր ու

յարատեւող մարդիկ չնչին առիթներն իսկ ոսկիի կը վերածեն:

Կ'արժէ նայիլ մեր շուրջ, անմիջապէս հաստատելու համար, որ մեր շուրջի համեստ արհեստաւորէն մինչեւ ծանր ծարտարարուեստի մեծանուն տէրերը եղած են իրենց ներկայացող առիթները լաւագոյնս օգտագործողները: Մարդիկ, որոնք նախանձելի դիրքերու հասած են, օգտակար դառնալով իրենց ընտանիքին, շրջապատին, միութեան եւ հայրենիքին:

Ներկայացող առիթներէն օգտուելու յարմարագոյն տարիքը պատանեկութեան եւ երիտասարդութեան շրջանն է:

Ուսումը շարունակելու եւ տեղ մը հասնելու առիթը կայ, պէտք չէ փախցնել զայն: Նիւթական եւ բարոյական դժուարութիւնները անյաղթահարելի՞ են, պէտք չէ յուսահատիլ բնաւ: Կամքն ու յարատեւութիւնը կը յաղթահարեն բոլոր տեսակի դժուարութիւնները:

Յարմար առիթ մը ներկայացած է գործի մէջ անելի զարգանալու եւ յառաջդիմելու, պէտք չէ արհամարհել զայն: Յոգնութենէն եւ աշխատանքէն պէտք չէ վախնալ: Կեանքի նպատակը պէտք է ըլլայ միշտ յառաջանալ եւ ներկայացող իրաքանչիւր առիթ օգտագործել:

Ներկայացող առիթները աշխատանքի կը մղեն մեզ: Անոնք որոնք դժուար, երկար եւ յարատեւ աշխատանքէ կը խուսափին, յաջողութիւն եւ նպատակի իրագործում պէտք չէ ակնկալեն:

Առիթներ «որսալ»ը եւ օգտագործելը նուրբ արուեստ է: Պէտք չէ ափսոսալ կորսուած առիթներու համար: Պարզապէս պէտք է օգտուիլ գիտնալ ներկայացող նոր առիթներէն:

Պէտք է դիտել ստրվիլ: Այն բոլոր առիթները, որոնք կեանքի ընթացքին կը ներկայանան մեզի, անպայման նոր սկզբնաւորութեան եւ յաջողութեան ճամբայ մը կը բանան մեր դիմաց:

Վերջապէս, առիթները պէտք է փընտռել մե՛ր եւ ոչ թէ մեր անմիջական շրջապատին մէջ:

«ՄԱՐԶԻԿ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐՈՒ Ա. ՀԱՏՈՐԻ ՍՊԱՆԵՐԷՆ ՕՐԻՆԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ԵՒ ԳՈՐՏՈՊԱՅԻ ՄԷՋ

Ստորև տրուած թղթակցութիւնները սպաներէնով լոյս տեսած են Պուէնոս Այրէսի «Արմենիա» օրաթերթին մէջ: Յայտրէնի թարգմանութիւնը կատարած է Գեորգ Գարամանուկեան:

24 Նոյեմբեր 2009ին տեղի ունեցաւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրականներու Ա. Հատորի սպաներէն թարգմանութեան օրինակին ներկայացումը, Արմենիա Մշակութային Ընկերակցութեան կեդրոնական ակումբին մէջ: Թարգմանութիւնը կատարած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Աբրահամ Ահարոնեան:

«Մարզիկ» պաշտօնաթերթը 1980էն ի վեր կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ: 1990 թուին, Կեդրոնական Վարչութիւնը կ'որոշէր հրատարակել «Մարզիկ»ի խմբագրականներու Ա. Հատորը, որ պիտի պարունակէր թերթին առաջին 79 խմբագրականները, լոյս տե-

սած՝ 1980-1990 տարիներու միջեւ: Անոնցմէ 73ը ստորագրուած էին Երուսաղէմի Տէմիրճեանի, իսկ մնացեալ 6ը՝ Յարութիւն Գազանճեանի կողմէ: Ա. Հատորի հրատարակութեան մեկենասութիւնը օրին յանձն կ'առնեն Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի անդամներ՝ եղբայրներ Յարութիւն Յովհաննէսեան եւ Յարութիւն Մառուկեան:

Հատորին սպաներէն օրինակին ներկայացման ձեռնարկը սկսաւ երեկոյեան ժամը 8.30ին, օրուան հանդիսավար էտկարտո Գէորգեանի բարի գալուստի խօսքով: Ապա ցուցադրուեցաւ «Մարզիկ»ի պատմութիւնը ներկայացնող տեսաերիզ մը, որ պատրաստուած էր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ՝ թերթին հրատարակման 25ամեակին առիթով: Ներկաները առիթը ունեցան տեսնելու եւ ունկնդրելու վկայութիւնները եղբայրներ Բիւզանդ Թորիկեանի, Միհրան Շիմշիրեանի, Յարութիւն Գազանճեանի, Պատրիկ Կիւլպէնկեանի եւ Վիգէն Աւագեանի: Տեսաերիզի ցուցադրութեան աւարտին խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Վիսենթէ Յովասափեան: Ան ըսաւ. «Բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն համար, որոնք գիտակցութիւնը ունին եւ կ'ըմբռնեն առաջնահերթութիւնը միութենական պատրաստութեան, հետեւողական եւ անհրա-

ժեշտ՝ ղեկավարներու նոր սերունդներու զարգացման համար, այս գիրքը պիտի դառնայ միջոցներէն մէկը փոխանցելու հիմնական գաղափարներ եւ սկզբունքներ ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ականներուն, այլ բոլոր անոնց, որոնք կը ցանկան դառնալ գաղութային մակարդակի ղեկավարներ»: Ան մատնանշեց եղբայրներ Աբրահամ Ահարոնեանի եւ Ատոլֆօ Չաքեանի ունեցած նպաստը այս գործին իրականացման մէջ: Իր խօսքին վերջաւորութեան, եղբ. Վիսենթէ Յովասափեան ընթերցեց «Մարզիկ»ի թիւ 73ի խմբագրականէն հատուած մը:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւա-



Մարիանօ Սարաւիա, եղբայրներ Աբրահամ Ահարոնեան, Խորխէ Գարամանուկեան եւ Սամի Սերտիներեան:

յին Ամերիկայի Շրջանային Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Խորխէ Գարամանուկեան ներկայացուց եղբ. Աբրահամ Ահարոնեանի տարիներու միութենական վաստակը, յիշելով թէ տարիներ շարունակ ան եղած է Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան անդամ, այնուհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի նորակազմ Շրջանային Վարչութեան ատենապետ, հուսկ ընտրուելով Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, երկու շրջան՝ 1999-2003 եւ 2003-2007: Եղբ. Խորխէ Գարամանուկեան նշեց նաեւ, որ խմբագրականներու Ա. հատորին թարգմանութիւնը իր առաջին գործը չէ: Եղբ. Աբրահամ Ահարոնեան նախապէս իրագործած է թարգմանութիւնը հետեւեալ կանոնագրութիւններուն. «Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կանոնադրութիւն», «Սկստակական կանոնադրութիւն», «Ժողովական կանոններ», «Շքանշաններու կանոնագրութիւն», «Հ.Մ.Ը.Մ.ական կենցաղագիտութեան եւ փրոթոքոլային հասկացողութեան ուղեցոյց», «Հ.Մ.Ը.Մ. եւ Ապրիլ 24» եւ «Հ.Մ.Ը.Մ.ի դաստիարակչական ուղեցոյց»: Իր խօսքին վերջաւորութեան, եղբ. Խորխէ Գարամանուկեան կարգաց ներկայացուած հատորէն երկու խմբագրականներ՝ «Ղեկավարը» եւ «Ապրիլ»:



Եղբայրներ Գարլոս Աէֆէրեան, Աբրահամ Ահարոնեան, Խորխէ Գարամանուկեան եւ Վիսենթէ Յովասարեան:

Շարունակելով ձեռնարկի յայտագրին գործադրութիւնը, խօսք առաւ թարգմանիչը՝ եղբ. Աբրահամ Ահարոնեան, նշելով Հ.Մ.Ը.Մ.ի կատարած գործունէութիւնը՝ ոչ միայն մարզական եւ սկստակական մարզերուն մէջ, այլ նաեւ՝ ղեկավարներու պատրաստութեան ուղղութեամբ: Եղբ. Աբրահամ Ահարոնեան յայտնեց, թէ «Մարզիկ»ի խմբագրականները սպաներէն լեզուով կը հանդիսանան «Մեծ աղբիւր Հ.Մ.Ը.Մ.ի ապագայ սերունդներուն համար: Պատրաստելով եւ հրատարակելով այս հատորը՝ կատարած ենք գործին կէսը: Միւս կէսը պէտք է յանձն առնեն միութեան ապագայ սերունդները՝ կարդալով այս գիրքը: «Մարզիկ»ի խմբագրականները պիտի կազմեն ովասիս մը այն առօրեայ անապատին մէջ, ուր կ'արժեքդրուին մարդ արարածին էական արժէքները»: Իր խօսքին աւարտին, եղբայրը շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, որ արտօնեց «Մարզիկ»ի խմբագրականներուն սպաներէնի թարգմանութիւնը, Փառլա Ահարոնեանին, որ ձեւակերպեց գիրքին կողքը եւ եղբ. Ատոլֆօ-Թիթօ-Չաքեանին (Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի անդամ), որ մեկենասութեամբ կարելի դարձուց «Մարզիկ»ի խմբագրականներու Ա. հատորին հրատարակութիւնը, ի յիշատակ իր հօր՝ Յակոբ Չաքեանի:

Վերջին խօսքը առնողը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գարլոս Աէֆէրեան, որ յանուն

Կեդրոնական Վարչութեան, շնորհաւորութիւններ յայտնեց թարգմանիչին, յիշելով նաեւ «Մարզիկ»ի այդ տարիներու խմբագիր եղբ. Երուանդ Տէմիրճեանի վաստակը:

Յանուն մասնաճիւղի վարչութեան, ատենապետ եղբ. Վիսենթէ Յովասարեան եւ փոխ ատենապետ եղբ. Դանիէլ Սապագատեան յուշատախտակներ յանձնեցին եղբայրներ Աբրահամ Ահարոնեանին եւ Ատոլֆօ-Թիթօ-Չաքեանին, իրենց կատարած ներդրումին համար, որ շատ կարեւոր դեր պիտի ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի ապագայ սերունդներու կազմաւորման մէջ:

Փակման խօսքը արտասանեց Հայ Առաքելական Եկեղեցւոյ Արժանթինի եւ Զիլիի Առաջնորդ՝ Գիսակ Արք. Մուրատեան, որ շնորհաւորելէ ետք գիրքի հրատարակման պատասխանատուները, իր փափաքը յայտնեց, որպէսզի գիրքին օրինակները չմնան գրադարանի մը անկիւնը, այլ՝ կարդացուին եւ գործածուին միութենական կեանքի զարգացման ընթացքին, եւ այդ ճամբով նոր սերունդներու մէջ տարածուին Երուանդ Տէմիրճեանի եւ Յարութիւն Գազանճեանի պէս մեծ մտաւորականներու գաղափարները:

Ձեռնարկին աւարտին ներկաները հիւրասիրուեցան պատուոյ սեղանով:

ԳՈՐՏՈՊԱՅԻ ՄԷՋ

Պուէնոս Այրէսի ձեռնարկէն երկու շաբաթ ետք, 11 Դեկտեմբեր 2009ին, «Մարզիկ»ի խմբագրականներու Ա. հատորի սպաներէն օրինակին ներկայացումը կատարուեցաւ Գորտոպայ նահանգի մայրաքաղաքին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի հիմնադրութեան 30ամեակի տօնակատարութիւններու ծիրէն ներս: Ձեռնարկը տեղի ունեցաւ Արմենիա Մշակութային Ընկերակցութեան «Անդրանիկ» ակումբին մէջ, երեկոյեան ժամը 9.30ին, ներկայութեամբ մեծ թիւով հայրենակիցներու: Բացման խօսքով ներկաները ողջունեց քոյր Սուսանա Վրզկրզեան: Ան ողջունեց ներկայութիւնը մայրաքաղաքի «Քատենա 3» ռատիոկայանի եւ «Թիւ 8» պատկերասփիւռի կայանի թղթակից Միկէլ Գլարիայի, Գոր-

տոպա նահանգի կառավարութեան «Ախենսիա Գորտոպա Տեկորթէս»-ի տնօրէն Իլյարի Սերիւնի, «Ռատիո Նասիոնալ»-ի թղթակից Մարիո Մանփանիթի եւ Գորտոպա նահանգի համալսարանի ատամնաբուժական բաժանմունքի տնօրէնուհի տոքթ. Գարմէն Վրզվրզեանի: Ներկայ էին նաեւ Գորտոպայի հայ գաղութի հոգեւոր հովիւ Երեմիա Խաչատրեան, Գորտոպայի հայ գաղութի վարչութեան ատենապետ Ռաֆայել Սիմոնեան, Հարաւային Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչ ճարտարագէտ Եղուարդ Թորոսեան, Հ.Յ.Դաշնակցութեան «Անդրանիկ» կոմիտէի ներկայացուցիչ Ռուբէն Աւագեան, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան անդամներ՝ քոյր Եփրուհի Նաքքաշեան եւ եղբայր Կոսմիաօ Դանիէլ Չաքեան, Հ.Օ.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի վարչութեան ատենապետուհի Սուսանա Չաքեան, ինչպէս նաեւ Գորտոպայի հայ գաղութի զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Քոյր Վրզվրզեան նշել է ետք եղբ. Աբրահամ Ահարոնեանի կատարած թարգմանութեան իսկական արժէքը, որ նոր սերունդներու տրամադրութեան տակ կը դնէ «Մարգիկ»-ի խմբագրականներու սպաներէն թարգմանութիւնը, հրաւիրեց Գորտոպայի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Սամի Մերտինեանը՝ իր խօսքը ուղղելու ներկաներուն: Եղբ. Մերտինեան յայտնեց. «Այս գիրքը, անտարակոյս, իբրեւ միջոց պիտի ծառայէ մեր երիտասարդութեան եւ ներկայի ու ապագայի ղեկավարներուն փոխանցելու մեր միութեան սկզբունքները: Սպաներէնի թարգմանութեամբ այս գիրքը լինելու պիտի հիմնաւորեն մեր միութեան մէջ ուսուցումը եւ զարգացումը, որպէսզի մեր գաղութին մաս կազմող ամէն երիտասարդ, որ հարկ եղած հմտութիւնը չունի հայ լեզուի, կարենայ այդ դժուարութիւնը հարթել եւ աւելի դիւրութեամբ տիրանալ մեր սկզբունքներուն: Այս միջոցներով վստահաբար պիտի կարենանք փոխանցել Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր նպատակները եւ սկզբունքները, որոնք ամրապնդուած են գրեթէ հարիւր տարուան կեանքի ընթացքին, որոնց շնորհիւ ան կարողացած է պատրաստել նոր սերունդներ եւ ղեկավարներ, որոնք մաս կը կազմեն Սփիւռքի ամէնէն մեծաթիւ անդամներ ունեցող, կազմակերպուած եւ գործօն միութեան»: Եղբ. Սամի Մերտինեան իր խօսքը վերջացուց ընթերցելով հատուած մը «Եօթանասուն տարի» խմբագրականէն:

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Խորխէ Գարամանուկեան, որ նշել է ետք եղբ. Աբրահամ Ահարոնեանի միութենական գործունէութիւնը, յիշեց սպաներէնի թարգմանած իր գործերը եւ անոնց վերջինը՝ «Մարգիկ»-ի խմբագրականներու Ա. հատորը: Իր խօսքին վերջաւորութեան, եղբ. Խորխէ Գարամանուկեան կարդաց ներկայաց-

ւած հատորէն երկու խմբագրականներ՝ «Ղեկավարը» եւ «Աշխարհը պիտի ծափահարէ մեզ»:

Շարունակելով ձեռնարկի յայտագրին գործադրութիւնը, քոյր Սուսանա Վրզվրզեան հրաւիրեց լրագրող Մարիանո Սարաւիան՝ ներկաներուն ուղղելու իր խօսքը: Մարիանո Սարաւիան անդրադարձաւ «Աշխարհը պիտի ծափահարէ մեզ» խմբագրականին, որ կը վերաբերի Մեծ Եղեռնին: Հարց մը, որ ներկայիս հրատապ կերպով կ'արծարծուի՝ նկատի ունենալով Հայաստանի եւ Թուրքիոյ կառավարութեանց միջեւ ստորագրուած փրոթոքոյնները, որոնք իբրեւ պատճառաբանութիւն կը ներկայացնեն սահմաններու բացումը, ձեռով մը մոռացման քող տարածելով Թուրքիոյ կողմէ հայ ժողովուրդի բնաջնջման փորձին վրայ: Մարիանո Սարաւիա մատնանրչեց հայ գաղութի կենսունակութիւնը եւ գործունէութիւնը, նշելով թէ ան միայն «Ֆոյքլորիք» գաղութ մը չէ:

Քոյր Վրզվրզեան խօսքի կարգով հրաւիրեց «Մարգիկ»-ի խմբագրականներու թարգմանիչ եղբ. Աբրահամ Ահարոնեանը, որպէսզի իր խօսքը փոխանցէ ներկաներուն: Եղբ. Աբրահամ Ահարոնեան կատարել է ետք ամփոփ պատմականը «Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան եւ նպատակներուն, յայտնեց թէ «Մարգիկ»-ի խմբագրականներուն մէջ ամենայն յստակութեամբ արտացոլուած են ո՛չ միայն մեր միութենական նպատակները, այլ նաեւ՝ հայ մշակոյթը եւ աւանդութիւնները, պատմութիւնը, կրօնքը, մարդկային արժէքները, բարոյագիտութիւնը եւ բարոյականութիւնը, յարգանքը եւ օրինակելիութիւնը: «Մարգիկ»-ի խմբագրականները պիտի կազմեն ովասիս մը այն առօրեայ անապատին մէջ, ուր կ'արժեզրկուին մարդ արարածին էական արժէքները», ըսաւ ան: Իր խօսքին աւարտին, եղբ. Ահարոնեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, որ արտօնեց «Մարգիկ»-ի խմբագրականներու Ա. հատորին սպաներէնի թարգմանութիւնը, իր դուստրին՝ Փառլա Ահարոնեանին, որ ձեւակերպեց գիրքին կողքը եւ եղբ. Ատոլֆօ-Թիթօ-Չաքեանին, որ կարելի դարձուց «Մարգիկ»-ի խմբագրականներու սպաներէն Ա. հատորին հրատարակութիւնը, ի յիշատակ իր հօր՝ Յակոբ Չաքեանի:

Ի վերջոյ, քոյր Սուսանա Վրզվրզեան հրաւիրեց Գորտոպայի մասնաճիւղի վարչութեան ատենապետը, որպէսզի յանձնէ այս առթիւ պատրաստուած յուշատախտակները՝ եղբայրներ Ատոլֆօ-Թիթօ-Չաքեանին, Աբրահամ Ահարոնեանին, Խորխէ Գարամանուկեանին եւ լրագրող Մարիանո Սարաւիային: Յետոյ ներկաները հիւրասիրուեցան պատուոյ սեղանի մը շուրջ, իր աւարտին հասցնելով այս սքանչելի ձեռնարկը, Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի հիմնադրութեան 30ամեակի ձեռնարկներու ծիրէն ներս:



Եղբայրներ Գարլուս Աէֆերեան, Խորխէ Գարամանուկեան, Աբրահամ Ահարոնեան, Գիսակ Արք. Մուրատեան եւ Վիսենթէ Յովասարեան:

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԸ ԵՒՄ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹԻՆ



Արարատի գագաթին Եռագոյնը կոթողելու Հ.Մ.Ը.Մ.ական երազը իրականութիւն է արդէն հինգ տարիէ ի վեր: 2005ին, երկու պուլկարահայեր՝ Ահարոն Քոչեան եւ Յովակիմ Քէշիշեան, Հ.Մ.Ը.Մ.ի Փլովտիվի մասնաձիւղէն, Եռագոյնը ծածանեցին սէգ գագաթի կատարին (տեսնել «Մարզիկ», 2005, թիւ 10, էջ 21): Երեք տարի ետք, 2008ին,

նմանօրինակ իրագործում մը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաձիւղի անդամներէն եղբ. Կորիւն Հայրապետեան («Մարզիկ», 2008, թիւ 11, էջ 38-39):

Նորագոյն սխարանքը կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ի Սիտնիի «Նաւասարդ» մասնաձիւղի անդամներէն եղբ. Ալֆոնս Տիտաթի, որ 16 Օգոստոս 2009ին համբուրեց Սրբազան լեռան

հրաշափառ գագաթը եւ, իր կարգին, անունը արձանագրեց Արարատը նուաձողներու շարքին:

Ստորեւ եղբ. Ալֆոնս Տիտաթի լեռնագնացութիւնը, աւելի ձիշղ՝ ուխտագնացութիւնը ներկայացնող պատումը, գրի առնուած եղբ. Յովհաննէս Մարտոյեանի կողմէ:

Աւտրալիարնակ 52ամեայ Ալֆոնս Տիտաթի, ծնեալ Հայէպ, այժմ սիտնիարնակ, Հ.Մ.Ը.Մ.ի «Նաւասարդ» մասնաձիւղի անդամ է 1980 թուականէն ի վեր: Ան ամուսնացած է Ռոզիկ Տիտաթիի հետ (Իզմիրլեան) եւ հայր է երեք մանչ զաւակներու:

16 Օգոստոս 2009ին, տեղական ժամանակով կէսօրէ առաջ ժամը 9ին, երեք ու կէս օր դժուարին ու վտանգաւոր մագլցումէ ետք, ան կը հասնի Սրբազան

լեռան՝ Արարատի գագաթը: Հարց տուի Ալֆոնսին, թէ իր անունը եւ մականունը բոլորովին օտար (խտալերէն), ի՞նչպէս կապուած է հայկականութեան, Ալֆոնս ըսաւ. 1825ին, Տիտաթի գերդաստանէն մեր ընտանիքը հինգ եղբայրներէ կը բաղկանար: Եղբայրներէն մէկը՝ Ալֆոնս կը բաժնուի, կ'երթայ պանդխտութեան, կ'ամուսնանայ հայ աղջկան մը հետ, այսպիսով կը ստեղծուի հայկական բոյն մը, որ կը շարունակ-

ուի մինչեւ օրս: Ես եւ եղբայրներս կը պատկանինք հինգերորդ սերունդին, կը խօսինք մաքուր հայերէն, կ'ընուած ու ամուսնացած ենք հայ եկեղեցւոյ մէջ, նոյնպէս՝ մեր զաւակները: Ահա թէ ինչու Արարատ բարձրանալը կրկնակի նշանակութիւն ունի ինձի համար:

Չորս տարի առաջ Հայաստան էի, չըջապտոյտներուս կողքին ներկայ եղայ Փոլթպոյի խաղի մը՝ Հայաստանի եւ Հոլանտայի ազգային խումբերուն



Օգոստոս 2009ին իրականացուցի ծրագիրս: Նախօրոք պայմանաւորուած էի լեռ բարձրացող յատուկ ընկերութեան մը հետ: 12 Օգոստոսին ճամբայ ելայ եւ Պոլսոյ վրայով 13 Օգոստոսին հասայ Վան: Զիս դիմաւորեցին եւ փոխադրեցին պանդոկ մը՝ Տոկու Պայագէտի մէջ: Ծանօթացայ ինծի ընկերակից երկու հայերու՝ Ալէն Ազիզեան Միացեալ Նահանգներէն, նախկին պարսկահայ, եւ Էտի Թաուրի, նախկին եգիպտահայ Գանատայէն: Վերջին երկուքը փորձառու լեռնագնացներ, իսկ ես՝ բոլորովին անփորձ լեռ բարձրանալու մէջ:

Պանդոկին մէջ ծանօթացայ խումբի բոլոր մասնակիցներուն, հետաքրքրական խօսակցութիւն, կարծիքներու փոխանակում եւ այլն: Լսելով այս բոլորը բաւական բան սորվեցայ, հակառակ որ խումբին մէջ ամէնէն տարեցն էի: Փորձառու լեռնագնացներու կողմէ քննուեցան բերուած բոլոր ապրանքները եւ գիշերով ճամբորդելու մեր լապտերները:

Օգոստոս 14ին, կէսօրէ առաջ ժամը 8ին, փոքր փոխադրակառքով, ընդամէնը 10 հոգի հասանք լեռան ստորոտը, 1800 մեթր բարձրութիւն: Անկէ վերջ վերելքը ոտքով պիտի ըլլար: Բարեբախտաբար, ապրանքները փոխադրուեցան ձիերով, դէպի առաջին կայան, 3200 մեթր բարձրութեան վրայ:



Ապա սկսանք բարձրանալ: Մեր առաջնորդը՝ քիւրտ Օրհանը քիչ մը վերջ, նկատելով դանդաղ եւ խիստ զգուշաւոր վիճակս, ուզեց որ իր ետին մնամ եւ նոյն ձեւով պահեմ քայլերս, յանձնարարելով խումբին՝ հետեւիլ մեզի: Երկու ժամ վերջ զգացի ծանր յոգնածութիւն եւ սկսայ դանդաղիլ, քիչ մը եւս եւ ահա կանգ առինք քիչ մը հանգստանալու համար: Երեք ու կէս շիշ ջուր խմեցի, տեսնելով վիճակս բոլորը գիտ շրջապատեցին, սպանացի մը դե-

միջեւ: Քովս նստած էր անգլիացի մը, որ նոյնպէս այցելու եկած էր Հայաստան: Ծանօթացումէն ետք հետաքրքրական խօսակցութիւն մը սկսաւ: Յանկարծ անգլիացին աչքերուս պիշ-պիշ նայելով ըսաւ. գիտե՞ս, Արարատ լեռը բարձրացած եմ, եւ սկսաւ ինծի պատմել լեռնագնացութեան մասին հետաքրքրական բաներ: Շնորհաւորեցի գինք եւ լաիդուն հիմա օրհնուած ես: Խնդացիք: Երբ Սիտնի վերադարձայ, սկսայ

մտածել օտար խօսակիցիս պատմածներուն մասին: Իբրեւ հայ, մեծ նախանձ մը արթնցաւ մէջս եւ սկսայ պրպտումներ եւ ուսումնասիրութիւններ ընել: Որոշեցի ծրագիրս՝ Արարատ լեռ բարձրանալ 2007 թուականին: Սակայն Հրանդ Տինքի նահատակութեան պատճառով յետաձգեցի:



դահատով ուղեց օդտակար դառնալ ինծի, վերջապէս քիչ մը կ'ազդուրուեցայ: Ահա այսպէս վեց ժամ տեւեց մինչեւ մեր առաջին կայանը 3200 մեթր բարձրութեան հասնիր: Ես եւ Ալէն Ագիգեանը գիշերեցինք նոյն վրանին մէջ, մերթ ընդ մերթ կը համտեսէինք հայկական «Նաւիրի» քոնեակը քիչ մը տաքնալու համար:

Օգոստոս 15ին բարձրացանք 4200 մեթր: Այս մագլցումը տեւեց վեց ժամ, յաճախակի կանդ առնելով 5-10 վայրկեան միայն: Վարժուեցայ՝ մանաւանդ Արարատին մօտենալու յոյսերը աւելի ուժ կու տային հողեկան ներաշխարհիս



եւ յառաջանալու թափս աւելի կը զօրացնէին:

Օգոստոս 16: Փոքր նախաճաշէ մը ետք սկսանք բարձրանալ նորէն դադար առնելով: սկսաւ աղօտ կերպով երեւիլ Փոքր Մասիսը: Սկսանք նկարել: Չափազանց ցուրտ էր, սառելու աստիճան: Մեր գլխարկները, ձեռնոցները եւ գուլպաները հագած դարձեալ կը մսէինք: Ուշադրութիւն դարձնող չկար, կը նկարէինք եւ կը բարձրանայինք: Խումբին առաջնորդ քիւրտ Օրհանը պահանջեց, որ կանուխ վրանները մտնենք, որպէսզի յաջորդ առաւօտ կանուխ բարձրանանք գագաթ:

Օգոստոս 17: Գիշերը չկրցայ քնանալ, անհանդարտ վիճակ մը ունէի. հազիւ զարթնումի գանգը հնչեց, ես կազմ ու պատրաստ վրանէն դուրս նետուեցայ: Սոսկալի ցուրտ էր, ձեռքերս սառիլ սկսան, անդրադարձայ թէ գլխարկ եւ ձեռնոց չէի հագած: Ալէնը արթնցաւ, խումբը հաւաքուեցաւ, միասին

նախաճաշեցինք: Տաք թէյ, պանիր եւ հաց: Առաւօտեան ժամը 3.30ին փոքրիկ յապտերները մեր ճակատներուն կապած՝ բարձրանալ սկսանք:

Քիւրտ Օրհանը զգուշացուց. ասկէ ետք 300-400 մեթր խիստ վտանգաւոր է, ձիւնը շատ սահուն է, կրնայ իր տակի մասը շարժել: Այս բարձրութեան վրայ զգալի է թթուածինի պակասը, կարեւոր է բաւական զգուշութեամբ շարժիլ, դարձեալ շեշտեց՝ հետեւիլ Ալֆոնսին քայլերուն:

Քիւրտ Օրհանի առաջնորդութեամբ սկսանք բարձրանալ: Ժամը անգամ մը կանգ կ'առնէինք հանգստանալու եւ ջուր խմելու:



Վերջապէս արեւածագին երեւցաւ Արարատը: Հրաշալի տեսարան, աննկարագրելի զգացում:

Այս վայրկեանին ինծի համար բառերը կը պակսին մանրամասնօրէն արտայայտելու հոգեկան ապրումներս եւ զգացումներս: Կարծես ուրիշ աշխարհ մը փոխադրուած էի, հայոց պատմութեան աշխարհին մէջ

կը շրջէի եւ անոր ոսկետառ էջերը կը կարդայի: Ժամերը շատ արագ կը սահէին եւ դեռ մենք կը բարձրանայինք:

Վերջապէս հասաւ միաւորման պահը: Ժամը 9ին, հինգ ժամ քայլէէ ետք, հասանք գագաթ՝ 5165 մեթր: Ուրախութեան բացականչութիւններ, իրարու գրկախառն շնորհաւորել, նկարուիլ...: Երեք հայեր, երեք տարբեր երկիրներէ եկած, արդեօք ասկէ աւելի հոգետրոփ, ասկէ աւելի յուզիչ ժամադրավայր կրնա՞ր ըլլալ: Երեքս՝ Ալֆոնս, Ալէն եւ էտի, երկիւղածութեամբ համբուրեցինք Սրբազան լեռան սպիտակ գագաթը, հոն ուր Յունիս 2006ին ուխտագնացութեան գնաց Յովհաննէս Շիրազի Արարատատրոփ սիրտը, մնալու համար, հսկելու համար...:

Գագաթին վրայ մնացինք 15-20 վայրկեան: Մեր առաջնորդ քիւրտը կ'աճապարէր վերադառնալ: Եղանակը սկսած էր փոխուիլ, պէտք էր ժամը 11ին

հասնիլ մեր առաջին կայանը՝ 4200 մեթր բարձրութեան:

Վայրէջքը եղաւ բաւական դժուար: Առաջին 70-80 մեթրը սահելով իջանք, բարձունքէն վար դիտելը սարսափելի էր: Սիրտ խառնուք, գլխու պտոյտ բնական երեւոյթներ էին: Բարեբախտաբար մեր ամբողջ իրերը ձիերու միջոցով փոխադրուեցան, եւ այսպէս կայան առ կայան հանգստանալով, դիշերելով, մէկ ու կէս օրէն, Օգոստոս 18ին հասանք լեռան ստորոտը՝ 1800 մեթր բարձրութեան վրայ: Հոն մեզ կը սպասէր փոխադրակառքը՝ բոլորս միասին փոխադրելու Տոկու Պայագէտի մեր պանդոկը: Բաւական հանգստանալէ ետք, երեկոյեան ժամը 7ին, պանդոկին տանիքին վրայ բոլոր խումբը նստաւ ընթրիքի: Բոլորս ուրախ, դժուարին ճամբորդութենէ վերադարձած կը պատմէինք մեր ապրած զգացումները, հոգեբանական մտավախութիւնները: Վայրկեանի մը համար ետ վերա-



դառնալու մտավախութիւնը եւ այլն: Բոլորիս աչքերուն մէջ կը շողար գոհունակութեան փայլք մը, յատկապէս երեքիս համար: Արարատ բարձրանալ, այն խառն գագաթին վրայ ծնրադիր աղօթք ըսել ուրիշ բան է, մեզի համար պատկանելութեան արժեւորում է: Փառք Աստուծոյ:

Ալէն Ազիզեան եւ ես մեր յաջող առաքելութեան կենացը խմեցինք մատաղով եւ հայկական քոնեակով: Խորոված ապսպրեցինք ու հիւրասիրեցինք մեր ընկերակիցները եւս: Բարձրաձայն խմեցինք մեր Արարատի կենացը: Խրախճանքը շարունակեցինք մինչեւ ուշ գիշեր:

Օգոստոս 19ին խումբէն մաս մը վերադարձաւ տուն, մնացեալներս այցելեցինք Վանի տեսարժան վայրերը, Ս. Խաչ եկեղեցին, Աղթամարը, Վանի բերդը:

Օգոստոս 20: Արարատ բարձրանալու երազս իրականացած, Վանէն Պոլիս եւ ապա Երեւան, հայրենաշէն նոր գործի մը կամաւոր մասնակցութիւն:

Օգոստոս 24: Կամաւոր ութօրեայ աշխատանք «Fuller Housing Armenia» հաստատութեան հետ: Աշտարակի շրջանի գրիղերէն մէկուն տան շինարարական աշխատանքներուն բոլորովին կամաւոր մասնակցութիւն:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Photos: © Yann Arthuis-Berthou, Ferre, rue du ciel. Licence 075 960031 - Standard 001

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hamrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
saber@arminco.com

Հ.Մ.Ը.Մ.Ը ՄԵՐ ՄՐՏԵՐՈՒՆ ՄԷՋ ՈՒՆԷՐ ԻՐ ՏԱՔՈՒԿ ԱՆԿԻՒՆԸ

Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԻ ԱՆՑԵԱԼԻ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԲԵՐԴԱՊԱՀ ԵՂԲ. ԱՆԴՐԱՆԻԿ ՍԻԼՎԻՈՒՔՉԵԱՆ

Հարցազրույցը վարեց՝ Բաֆֆի Սիլվահեան ՅԱԼԷՊ

Հ.Մ.Ը.Մ.Ի Հալեպի մասնաճիղի վաստակաշատ դեմքերեն է եղբ. Անդրանիկ Սիլվիքճեան, որ երկար տարիներ եղած է Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցչական խումբին խմբապետն ու բերդապահը: 1937ի ծնունդ եղբ. Անդրանիկ փոքր տարիքէն մարզական իր կեանքը սկսած է Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտական ֆութպոլի խումբերուն մէջ եւ հասած է մինչեւ միութեան առաջին կազմը, ուր ծառայած է աւելի քան 15 տարիներ, ըլլալով գլխաւոր խաղացողներէն մէկը, որ 1962ին տիրացած է Սուրիոյ Հանրապետութեան բաժակին, իսկ 1965ին՝ Սուրիոյ ախոյեանութեան տիտղոսին: Շրջան մը ան եղած է Հ.Մ.Ը.Մ.Ի վարչական եւ ֆութպոլի պատասխանատու:

Եղբ. Անդրանիկ կրած է նաեւ Սուրիոյ հաւաքականին շապիկը, որուն հետ ան մասնակցած է բազմաթիւ մրցաշարքերու: Ութը տարիներ շարունակ, Հ.Մ.Ը.Մ.ական ութը եղբայրներու հետ, ան մաս կազմած է նաեւ Հալեպի ֆութպոլի հաւաքականին:



Ստորեւ՝ «Մարզիկ»ի հարցազրույցը եղբոր հետ:

Եղբ. Անդրանիկ, ի՞նչ տարբերութիւն կը գտնէք անցեալի եւ ներկայի մարզիկներուն միջեւ:

- Դժբախտաբար, համաշխարհային գետնի վրայ մարզանքը դարձած է նիւթականի ապահովման միջոց, ինչ որ իր ժխտական ազդեցութիւնը կ'ունենայ մարզիկի մը կենցաղին



վրայ: Անցեալին, մենք Ֆուլթպոլ կը խաղայինք սիրալոթար կերպով, առանց նիւթական որեւէ ակնկալութեան, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը մեր սրտերուն մէջ ունէր իր տաքուկ անկիւնը: Բայց, դժբախտաբար, երբ արհեստավարժութիւնը մուտք գործեց, մեր մարզական կեանքը սկսաւ երթալ դէպի անորոշ ճամբայ, ուր երբ մարզիկի մը նիւթական չտրամադրես, ան կը հեռանայ խումբէն եւ չի վերադառնար՝ մինչեւ իր պահանջներուն իրագործումը:

Ձեր մարզական կեանքը ապրած էք արհեստավարժութեան հետ: Ի՞նչպէս կ'արժեւորէք ներկայ արհեստավարժութիւնը:

- Արհեստավարժութիւնը յաւ է, երբ ճիշդ ձեւով իրագործուի, որովհետեւ ան միայն նիւթական չէ, այլ իր պայմաններուն մէջ կը պարփակէ զանազան կէտեր, զորս պարտաւոր է իւրաքանչիւրը իր աշխատանքի սահմանին մէջ ամբողջացնել: Նայելով միջազգային մակարդակին, Սուրիոյ մէջ եղող արհեստավարժութիւնը տակաւին տկար է եւ կարիքը ունի յատուկ ուսումնասիրութիւններու:

Ձեր բերդապահութեան շրջանին, յարձակողական ո՞ր խաղացողներէն կը զգուշանայիք:

- Մեր օրերուն, Սուրիոյ ախոյեանութեան մասնակցող

խումբերը կը բաղկանային ութը ակումբներէ, որոնք ընդհանրապէս նոյն մակարդակի էին: Իբրեւ յարձակողական խաղացող կարելի է յիշել Աւետիս Գալյաքեանը, «Իթթիհատ»էն Եասիա Հափարը: Մեր խումբին մէջ ալ կային խաղացողներ, որոնք մտահոգութիւն կը պատճառէին մրցակից բերդապահներուն, ինչպէս՝ Գօգօ Քիլէճեանը, Սերոր Մերթ-խանեանը եւ Անդրանիկ Մարեանը:

Ի՞նչ ունիք ըսելիք 1962ի եւ 1965ի ախոյեանութիւններուն մասին:

- Այդ ախոյեանութիւններուն տիրացողը մենք չէղանք, այլ՝ Հ.Մ.Ը.Մ.-ը, որովհետեւ իւրաքանչիւր մրցումի մենք իբրեւ խաղացող մտեցանք Հ.Մ.Ը.Մ.ականի բարձր գիտակցութեամբ, համոզուած՝ որ պիտի դայօրը եւ մենք պիտի տիրանանք Սուրիոյ ախոյեանութեան: Այդ շրջանին կային խումբեր, որոնք մեր մակարդակին էին, բայց մեր կամքը, մեր կորովը, մեր հաւատքն ու միտքեանական գիտակցութիւնը օգնեցին որ մենք տիրանանք Սուրիոյ ախոյեանութեան տիտղոսին:

Կրնա՞ք ներկայացնել յատկանշական դէպք մը, որ արձանագրուած է ձեր յիշողութեան մէջ:

- Իբրեւ յատկանշական դէպք, գոր կը յիշեմ 1962ի Սուրիոյ Հանրապետութեան բաժակի եւ 1965ի Սուրիոյ ախոյեանու-



1965-ի Սուրիոյ ախոյեան Հ.Մ.Ը.Մ.-ի խումբը Բերիոյ Թեմի Առաջնորդ Ղեւոնդ Սրբազանին հետ

թիւններէն, այն է թէ՛ ես այդ շրջանին խումբին խմբապետը ըլլալով, աւարտական մրցումին ախոյեանութեան բաժակը ստացայ երկրի նախագահ Նազէմ Քուտսիէն: Ախոյեանութեան մրցումներուն մենք կատարեցինք ութը հանդիպումներ եւ ստացանք միայն մէկ կող, այն ալ աւարտական մրցումին, երբ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեցինք բանակի խումբը:

(Շար.ը՝ էջ 40)

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating / air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՎԷՊԻ ԱԿՈՒՄԲԸ

Սամուէլ Սկրտիչեան ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Այսօր, այսքան տարի ետք, երբ ակնարկ մը կը նետենք Միջին Արեւելքի հայկական կուսակցութիւններու անցեալի կեանքին՝ կառուցներուն թէ դործունէութեան վրայ, անմիջապէս մեր ուշադրութիւնը կը գրաւեն տարուած մեծ աշխատանքը, ցանուած հունտն ու արդար քրտինքը, հոգեկան թէ բարոյական յաջողութիւնները, հայակերտումի թէ մարդակերտումի օրհնեալ բերքը: Ու մենք կը հիանանք մեր տեսածով:

Աստուած իմ, գաղափարական այդ ինչ զօրաւոր հաւատք ու գիտակից նուիրում էր, այդ ինչ խիզախ կամք ու եռանդ էր, որ մեր կուսակցութիւնները նուիրաբերեցին՝ հայ ազգին թափառական գաւազներուն հոգիին մէջ ազգային գիտակցութիւն սերմանելու, ազգային սրբազան կրակ վառելու:

Բայց այսու մեր նպատակը այդ հոգեկան թէ բարոյական, նիւթական թէ ֆիզիքական յաղթանակներուն մասին խօսիլ չէ: Այլ մեր ըսել ուզածը այն է, թէ մարդկային այդ ինչ խուռներամ բազմութիւններ էին, հայրենի հողին կարօտով մրրկած այդ ինչ մարդիկ էին, որոնք ազգային տեսլականներով համակուած՝ կը լեցնէին թէ՛ Հայկալի եւ թէ Պէյրութի կուսակցական ակումբները: Թէեւ, խորքին մէջ, հայ-



1949. Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբի բացման երեկոյթին:

րենիքէն հալածուած, ջարդուած հայոց մնացորդացն էր, որ ինքն իր ամբողջականութեամբ կը շողախուէր, ինքն իրմով կը մրրկէր ու կը դառնար մէկ ամբողջութիւն, մէկ ոյժ, որ կը ծառայէր հայ ու Հայաստան տեսլականին, թէեւ՝ տարբեր անուններով եւ ճիւղաւորումներով:

Հոն՝ ասպնջական Սուրբիոյ թէ Լիբանանի մէջ, կուսակցութիւն թէ ժողովուրդ, ամէն կուսակցութիւն ունէր իր ժողովուրդը, կարծես մէկը միւսով կ'ամբողջանար, կարծես մէկը միւսով կը զօրանար, քանի որ կուսակցութիւն թէ ժողովուրդ՝ այնքան շողախուած էին իրարու, այնքան միաձուլուած էին իրարու մէջ, որ մարդ կը դժուարանար զանոնք զանազանելու իրարմէ:

Այդ օրերուն կուսակցական ակումբները դարձած էին տեսակ մը ժողովրդային տուններ, դարձած էին ձեւով մը ժողովրդային ջերմիկ օճախներ՝ հաճելի, մտերիմ:

Յարգելի ընթերցող, դուք տեսա՞՞՞ք Հայկալի թիլէլ պողոտային վրայ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը՝ այդ հնամենի սճով, բայց մեծղի, հաճելի կառույցը, որ նստած էր ծանր, խոհուն, եւ իբրեւ նահապետա-



Տոքթ. Պերպերեան եւ Քերոբ Առաքելեան:

կան ընտանիքի գաւակ, կը դիտէր Հ.Մ.-
Լ.Մ.ի աշխատանքը, երգն ու բերքը, խաղն
ու տաղը բազմաճիւղ:

Յարգելի ընթերցող, դուք վայելա՞ծ էք
ասպնջական ընդունելութիւնը Հ.Մ.Լ.Մ.ի
ակումբին: Դուք ըմբռնանա՞ծ էք անոր մե-
ծարանքն ու պատիւը փառաւոր...: Ուս-
տի, հաճեցէք նստիլ սանկ քովս, սա հա-
մեստ աթոռին վրայ, ու ես կամաց-կամաց
ձեզի պատմեմ անոր կեանքը, անոր
փառքն ու տառապանքը հաճելի:

Թուրքին կազմակերպած Հայոց Յե-
ղասպանութենէն ետք, ազգային ինքնա-
կերտումի, վերականգնումի օրերուն, կու-
սակցական ակումբները դարձած էին յոյ-
սի, լոյսի խորան, ուր սերունդները սե-
րունդներուն ձեռք տուած՝ կու գային
ուխտի: Կու գային գաղափարական հաւա-
քի: Անոնք՝ այդ միամիտ անկեղծ տղաքը,
կու գային ակումբ՝ նուիրուելու, ծառայելու
այն մաքուր հա-
ւատքով, թէ իրենք պարտական են իրենց
ազգին, իրենց պա-
պերուն արեան հանդէպ: Թուրքին, քիւրտին
տուած վէճը
դեռ կը կոտտար անոնց սրտերուն մէջ:

Անոնք՝ ուխտեալ թէ համակիր, կու գային
ակումբ հայրե-
նի խապրիկ մը առնելու, իրենց կարօտին,
իրենց տարտին յոյս
մը, լոյս մը լսելու:

Մինչ իրիկուան մութը հագիւ թէ թեւերը
կը տարածէր հա-
յակերտ Նոր Գիւղին վրայ, Հ.Մ.Լ.Մ.ի սկառու-
տը կը դիմէր հօ-
րը՝ ըսելով.

- Հայրիկ, այսօր Ուրբաթ է, սկառուտակա-
ն ժողովիս օրն է:
Ուստի, ակումբ պիտի երթամ: Այսօր մեր
խմբապետը կարե-
ւոր նիւթի մը մասին պիտի խօսի: Նկատի
ունեցէք, որ կրնամ
ուշանալ:

Ու կ'երթար: Կ'երթար՝ դաստիարակու-
ելու, բան սորվե-
լու, մարզանալու: Նոյն ժամերը քիչ մը
անց, ուրիշ մը կը ձայ-
նէր.

- Կնիկ, ակումբ կ'երթամ:

Դաշնակցական շարքային մըն էր, շեշտը՝
քիչ մը հրամա-
յական: Ու կ'երթար: Բայց կիներ տարի-
ներու փորձառութենէն
դիտէր, որ այդ դիշեր ամուսինը կուսակց-
ական ժողովի կ'եր-
թար, «Զաւարեան» ակումբ կ'երթար: Զաւարեան
բառը Դաշ-
նակցութեան հիմնադիր երրորդութեան
մասնակից Սիմոնին
մականունն էր: Բայց այս պարագային,
փոխաբերաբար, ե՛ւ
դպրոցին, ե՛ւ գրագարանին, ե՛ւ Դաշնակցու-
թեան կոմիտէին, ե՛ւ
պատանեկան միութեան մակդիրն էր:
Հոն, դպրոցին մէջ
ցերեկները հայ սերունդներ կը դաստիարակու-
էին հայ դիր ու
բանին խորհուրդով, իսկ գիշերները
հայ ազգին ցաւը շալկած
կուսակցական ժողովներ տեղի
կ'ունենային: Երբեմն «Ջան
Ֆետայիններ» կ'իջնէին ժողովի՝
յոյս ու լոյս ներշնչելու:

Հ.Մ.Լ.Մ.ի ակումբը: Այս խօսքը այդ
հեռաւոր օրերուն
այնքան խոր ու խորունկ իմաստ
ունէր, այնքան ուժակա-
նութիւն ու խորհուրդ
ունէր, որքան եթէ մէկը
ըսէր՝ եկեղե-
ցի կ'երթամ: Թերեւս
եկեղեցի գացողին կարելի
ըլլար բանի մը

Տողանցք՝ Հալէպի թաղերուն մէջ:



ԼԵՐՆ
ԸՄԵՐ

համար առարկել: Բայց ակումբ գացողին
համար վերապահ
կը գտնուէին: Հոն՝ ակումբէն ներս
ազգային հարց կար, խոր-
հուրդ կար: Հոն ազգին համար
խոր ու խորունկ ժողով կար:
Հոն՝ Երկրի կարօտով մրրկող,
տուայտող հայ մարդուն հա-
մար հոգեկան հայրենիք կար,
ցաւ ու հոգ կար: Հոն ազգին
ապագայ սերունդներուն համար
լսելու սորվելու, սուրբ ու
սրբազան լսարան կար,
գաղափարական պատգամ
կար: Հոն
ակումբը գաղափարական
հաւատամքի բազինն էր,
ուր
ուխտեալները պիտի գային
գաղափարական շունչով,
կրա-
կով ջերմանալու:

Եւ դեռ, պալատական այդ
կառուցը, իբրեւ ակումբ
մկրտուած օրէն, առանց
ցերեկ-գիշեր ըսելու, առանց
կարգ-
կանոն նկատի առնելու,
առանց յոգնելու սպասարկած է
Հ.Մ.Լ.Մ.ի աշխատանքներուն,
սպասարկած է Հ.Մ.Լ.Մ.ի եր-
գին ու բերքին: Հ.Մ.Լ.Մ.ի
նեղ օրերուն ինքն ալ
նեղուած ու դեղ-դարման
փնտռած է: Իսկ յաջողութեան,
ուրախութեան հետ
ինքն ալ ուրախացած ու քէֆ
ըրած է:

Եւ դեռ, ակումբը մաս կը
կազմէր շատերու առօրեային,
կեանքին:

Շատերուն համար սովորու-
թիւն դարձած էր գործէն ար-
ձակուելէ ետք, տուն
չգացած, գործի հագուստով
գալ ակումբ՝ ընկեր-բարեկամ
տեսնելու, քիչ մը խօսելու,
Ֆուլթ-պոլի մասին տեղեկու-
թիւն ստանալու եւ հոգեպէս
լիցքաւորուած՝ տուն
դառնալ, վաղը նորէն
գալու, վաղը նորէն գիրար
տեսնելու, իրարու բարեկե-
լու եւ բարեկին իմաստը
զօրացնելու:

Ու չէին մոռնար... Ու դեռ,
ուրիշներ ակումբ կու
գային պարագայէս
ակումբին մթնոլորտէն
համ առնելու: Ու դեռ,
ուրիշներ ակումբ կու
գային կօշկակար Սիմոնին
նարտիի խաղը գիտելու,
Հրաչ Փափագեանին
իմաստալի խօսքերը
մտիկ ընելու: Ապա
Լեւոն աղբարին (սրճեփին)
համով սուրճը իմելէ
ետք, հոգեպէս բաւարարուած
տուն կը դառնային:

(Շար.ը էջ 40)

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, ԺԷ. ՄԱՍ

Հայկազեան վարժարանի հոգաբարձութիւնը ակումբ-րի խնդրին շուրջ ժխտական պատասխան կու տայ, բայց կ'արտօնէ որ Ազգ. մանկապարտէզի սրահին մէջ գոն մարտի ընդհանուր անդամական ժողով, ուր պիտի զեկուցուէր ողիմպիականի եւ վարչութեան գործունէութեան մասին:

Դաշտը ապահովելու խնդիրը ամէնէն շատ զբաղեցնող հարցը կ'ըլլայ: Կայարանի տնօրէնութեան եւ Թէր Սէնթ Գոյէ-ճի անորոշ պատասխաններէն ետք, կ'որոշուի դիմել Ռամի դաշտի պատասխանատուին եւ նուագագոյն գիջումով համաձայնիլ: «Ողիմպիականէն գոյացած զուտ հասոյթը կէս առ կէս պիտի բաժնուին: Դաշտահանդէսը պիտի տրուի 14 Նոյեմբեր 1926ին: Նոյն օրը անձրեւելու պարագային հանդէսը պիտի յետաձգուի յաջորդ Կիրակիի»:

Այս առթիւ կ'որոշուի թերթերու մէջ յայտարարութեան զատ նաեւ առանձին թուոցիկներով ժողովուրդին իմացնել հանդէսին բնոյթը, որ պիտի հովանաւորէր Թեմին Առաջնորդը: Օրուան դատաւորն է Վահէ Սէթեան, բժիշկը՝ տոքթ. Պասամճեան: Դաշտի յանձնախումբը բացառաբար կազմուած է հայ ազգայիններէ:

Նոյեմբեր 14, 1926, որոշուած դաշտահանդէսը տեղի չ'ունենար: Կ'անձրեւէ: «Այս անյաջողութիւնը, կը կարդանք վարչութեան 15 Նոյեմբերի արձանագրութեան մէջ, մեզ բաւական յուսահատեցուց: Նիւթական ու բարոյական վնասը այսչափ յոգնութիւններու վրայ բարդուելով, քիչ մնաց մեզ ստիպէին որ ողիմպիականը գարնան յետաձգէինք: Սուր վիճաբանութենէ ետք, որոշուեցաւ յառաջիկայ Կիրակի, 21 Նոյեմբերին, հանդէսը տալ, առ այդ կրկին բոլոր գործերը կարգադրուեցան»:

Նոյեմբեր 22, 1926, վարչութեան հերթական նիստի արձանագրութեան մէջ կը կարդանք.

«21 Նոյեմբեր 1926ին, Կիրակի կէսօրէ ետք տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Ա. ողիմպիական դաշտահանդէսը, Ռամի Թերա Սանթա դաշտին վրայ: Խաղերը ընդհանուր առմամբ կանոնաւոր էին, դատաւորներու ճշդապահութիւնը գնահատելի էր:

«Ողիմպիականին կը մասնակցէին 85 սկաուտներ եւ 65 մարզիկներ: Ժողովուրդը մինչեւ վերջին վայրկեանը հետաքրքրութեամբ հետեւեցաւ խաղերուն: Օրուան ախոյեանութիւնը շահեցաւ Յարութիւն Մաթոսեանը: Ժամանակի երկարաձգումի հետեւանքով, հանդէսին նախագահ Արտուազգ Ծ.Վ. մետալներուն բաշխումը յետաձգեց յառաջիկայ Կիրակի եկեղեցւոյ շրջափակին մէջ անձամբ յանձնելու խոստումով»:

Հայէպէն Շաւարշ Պէքերեանին ղրկուած հրաւիրագիրին պատասխանը ժխտական եղած էր եւ, սակայն, ողիմպիականի օրերուն Պէքերեան գործի բերումով Հայէպ գտնուած ըլլալով, գինք վարչութեան մէջ կ'առնեն ու իրեն կը յանձնեն ֆուլթայոյի կազմակերպման գործը:

Հայէպի Ա. ողիմպիականին շահուած մետալները, Կիրակի, 28 Նոյեմբերին, Քառասուն Մանկանց եկեղեցւոյ շրջափակին մէջ, յաւարտ Ս. Պատարագի, ժողովուրդին ներկայութեան, կը տրուի մրցորդներուն: Կարգապահութեան կը հսկեն Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտները:

«Հ.Մ.Ը.Մ.Ի ֆուլթայոյի խումբերը, կը կարդանք 29 Նոյեմբեր 1926ի արձանագրութեան մէջ, կանոնաւորելու եւ մրցումներ սարքելու համար անհրաժեշտ պահանջ մը դարձած է ֆուլթայոյի սեփական դաշտի մը հարցը: Որոշուեցաւ որ Մասպանաճեան, Կարապետեան, Մուրատեան յառաջիկայ

չարթու ընթացքին պտրտին Հայկ պի շրջա-
կալքը՝ ի խնդիր յարմար վայրի մը»:

Դեկտեմբեր 6ի նիստին, «Դաշտ մը գրտ-
նելու համար ընտրուած յանձնախումբը իր
վրայ դրուած պարտականութիւնը կատարեց-
յարմարագոյն դաշտ մը գտած է Սիւլէյմանի-
էի կից: Որոշուեցաւ դաշտին տէրը գտնել եւ
համաձայնիլ եթէ կարելի է, ճրի»:

Յաջորդ ժողովին արձանագրութիւնը.
«Դաշտին տէրը առանց վճարումի կը տրա-
մադրէ Հ.Մ.Ը.Մ.ին յիշեալ դաշտը մինչեւ
անոր ծախսելիը կամ ձեւով մը օգտագործուի-
լը: Վարչութիւնս սեփականատիրոջմէն պատ-
ւոյ խօսք առնելով, որոշեց պէտք եղածը ընել
գետինը ֆոթօպոլի դաշտի մը վերածելու հա-
մար»: Նոյն ատեն, սենեակի փնտռուածքի
յանձնախումբը կու տայ իր գեկուցումը.
«Հոգետան մէջ գտնուող գրադարանի
սենեակին մէջ Հ.Մ.Ը.Մ.ին ալ տեղ մը յատկաց-
ւելու համար գրապահին հետ համաձայնու-
թիւն գոյացաւ»: Այսպէսով, Հ.Մ.Ը.Մ.ի Հայկ-
պի վարչութիւնը կ'ազատէր եւ ազատ շունչ մը կը սկսէր
քաշել. կը դադրէր աջ ու ձախ դեգերումներէն, երբ
կ'ունենար իր դաշտը եւ իր սենեակ-ակումբը, ուր վարչու-
թիւնը երկար ատեն տեղէ տեղ դեգերումներէ հտք իր առաջին
նիստը կը գումարէ ու կ'արձանագրէ:

«Նոր սենեակը Հ.Մ.Ը.Մ.ի վայել մարգական ակումբի մը
վերածելու համար որոշուեցաւ Լեւոն Աբգարեանին թերադ-
րել մարգական բոլոր պատկերները բերել իրենց տունէն -մօ-
րը քովէն- ու զարդարել սենեակը: Նոյնպէս, Լուտեր Մասպա-
նաճեանին մեծ սեղանը, առժամապէս գործածելու համար
որպէս գրասեղան. բերել նաեւ պահարան մը մանր-մուկ
գործիքները պահելու համար»:

Վարչութիւնը լծուած է աշխատանքի՝ դաշտի յարգարու-
մի եւ Յունուար 9, 1927ին սարքուելիք ընկերային հաւաքոյ-
թիւն յայտագրի պատրաստութեամբ:

Պէյրուէի մէջ, պէյրուէի հայու թեան հետ, Հ.Մ.Ը.Մ.ի
վարչութիւնը հետամուտ էր Հայաստանի աղէտեալներուն
հանգանակութեան գործին: Շատ ուշ կ'արտօնուի Հ.Մ.-
Ը.Մ.ին հանգանակութեան ձեռնարկել՝ պայմանով որ ազատ
կացուցուէին Ս. Նշան եւ Ս. Խաչ քէմբի եկեղեցիները, ուր
հանգանակիչ մարմինը մասնաւոր կարգադրութիւններ ըրած
էր: Վարչութիւնը իր պարտականութիւնը կատարած ըլլալու
համար, սեղմ շրջանակով, իր անդամներուն մէջ հանգանա-
կութիւն կը կատարէ ու ձեռք բերած կոկիկ գումարին վրայ
իր վտիտ գանձէն 10 ս. ոսկի ալ աւելցնելով կը յանձնէ հանգա-
նակիչ կեդրոնական մարմին:

Վարչութիւնը նկատի ունենալով անդամներուն բարոյա-
կան ու իմացական դաստիարակութեան կարեւոր հարցը,
կ'որոշէ Մերձաւոր Արեւելքի Որբ. Ընկերակցութեան սրահին
մէջ, երկու շաբաթը անգամ մը անպայման դասախօսութիւն
կազմակերպել:

Վարչութեան ծրագրած Նոր Տարուան «անդամա-համակ-



րական» երեկոյթը յետաձգուելով, կը կատարուի 15 Յուն-
ւարին, Մ.Ա.Ո. Ընկերակցութեան սրահին մէջ: Այս հաւաքոյ-
թիւն կը հրաւիրուին նաեւ Նպաստամատոյցի կարեւոր
ղէմքեր՝ Նպաստամատոյցի ընդհանուր տնօրէն Փառույ,
Որբերու Ընկերակցութեան ընդհանուր վարիչ Մըրֆի, Ան-
թիլիասի որբանոցի տնօրէն Պրատուն եւ ուրիշներ:

Հանդէսի ձեռնարկէն հտք, վարչութիւնը կը պատրաստէ
քաղաքին ծանօթ ազգային ղէմքերուն անուանացանկը՝ գա-
նոնք արձանագրելու «պատուոյ անդամ», որովհետեւ 4 Յուն-
ւար 1927ի վարչական նիստին կատարուած հաշուեքննու-
թեանէն հտք պարզուած էր որ «մուտքէն աւելի ելք» ունեցած
էր վարչութիւնը, ուստի կ'որոշուի «մուտքին վրայ կերպով
մը յաւելում կատարել համակիր անդամներ արձանա-
գրելով»:

Վարչութիւնը կը զբաղեցնեն նաեւ դաշտի ու
խմբապետներու խնդիրները: Առաջինին հետապնդման հա-
մար պարտականութիւն կը տրուի Օ. Քէշիշեանին եւ Ա.
Քեայեանին, իսկ խմբապետներու վերակազմութեան գործը
ձեռք կ'առնեն Ժիրայր Պալեան եւ Ալպէր Յակոբեան:

1927ի Նոր Տարին Հ.Մ.Ը.Մ.ի համար կ'ըլլայ բախտաւոր:
Տարուան սկիզբը, Պէյրուէի մասնաճիւղը նամակ մը կը ստա-
նայ Ջահլէէն, որով կը յայտնուէր Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը
կազմութիւնը Լիբանանի ամարանոց այդ հայաշատ գաղու-
թիւն ծոցին մէջ:

«Ուրախութեամբ ստացած ենք,- կը գրէ Պէյրուէի վար-
չութիւնը իր 22 Յունուար 1927 թուակիր նամակով,- Ձեր նա-
մակը որով նկատի առնելով տեղւոյ յարմարութիւնը Հ.Մ.-
Ը.Մ.ի մասնաճիւղ հիմնելու, եւ այս առթիւ կը խնդրէիք մաս-
նաճիւղիս նիւթական եւ բարոյական աջակցութիւնը:

(Շար. 15)



ՄՈՆԻՏԻՆԳ Ա. ՀԱՆԳՐՈՒՄՆԻ 8 ԽՄԲԱԿՆԵՐԸ



Գեորգ Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

4 Դեկտեմբեր 2009ին, Հարաւային Ափրիկէի Քէյփ Թաուն քաղաքին մէջ տեղի ունեցաւ Մոնտիալի աւարտականին հասած 32 խումբերու խմբակային դրուժեան վիճակաձգութիւնը:

Առաջին անգամ ըլլալով Մոնտիալը տեղի պիտի ունենայ Ափրիկեան ցամաքամասին մէջ: Բացի կազմակերպիչ երկիրէն՝ Հարաւային Ափրիկէէն, մնացեալ բոլոր խումբերը՝ ներառեալ նախկին ախոյեան Իտալիան, կատարեցին գտումի մրցումներ:

Այս մրցաշարքին Եւրոպան կը մասնակցի 13 խումբով, Հարաւային Ամերիկան՝ 5 խումբով, Ափրիկէն՝ 6 խումբով, Հիւսիսային եւ Կեդրոնական Ամերիկաները 3 խումբով, Ասիան՝ 3 խումբով,

իսկ Ովկիանիան 2 խումբով:

Մրցաշարքին կը մասնակցին Ֆուլթայոլի աշխարհի «մեծ»երը: Հիմնական բացականերն են Շուէտը, Ռուսիան, Այիրը եւ Եգիպտոսը, որոնք մետասաներորդ պահուն դուրս մնացին:

Խմբակներու վիճակաձգութիւնը կատարուեցաւ բաւականին մտածուած եւ ճիշդ ձեւով: Թերեւս այս մտայղացումն է պատճառը, որ այս Մոնտիալին, ինչպէս նախորդ Մոնտիալներուն, չկան «մահուան խմբակներ»: Բոլոր խմբակները հաւասարակշռուած են: Ճիշդ է որ կարգ մը խմբակներու խաղերը կրնան աւելի հետաքրքրական ըլլալ, կամ կարգ մը մրցումներ մեզի կը յուշեն «տաք» ճակատումներ, սակայն բոլոր խումբերուն վիճակուած է գրեթէ նոյն մրցակցութիւնը: Այս երեւոյթը դրական առաջին քայլն է յաջող Մոնտիալի մը սկիզբին համար:

Խմբակներու պատկերը հետեւեալն է՝

- Ա. Խմբակ- Հարաւային Ափրիկէ, Մեքսիքա, Ուրուկուէյ եւ Ֆրանսա:
- Բ. Խմբակ- Արժանթին, Նիճերիա, Հարաւային Քորէա եւ Յունաստան:
- Գ. Խմբակ- Անգլիա, Մ. Նահանգ-

ներ, Ալճերիա, Սլովենիա:

- Դ. Խմբակ- Գերմանիա, Աւստրալիա, Սերպիա եւ Ղանա:
- Ե. Խմբակ- Հոլանտա, Դանիա, Ճափոն եւ Քամերուն:
- Զ. Խմբակ- Իտալիա, Փարակուէյ, Նոր Զելանտա, Սլովաքիա:
- Է. Խմբակ- Պրագիլ, Հիւսիսային Քորէա, Փղոսկրեայ Ափունք եւ Փորթուգալ:
- Ը. Խմբակ- Սպանիա, Զուիցերիա, Հոնտուրաս, Չիլի:

Ա. ԽՄԲԱԿ

Այս խմբակը բաւական հաւասարակշռուած է: Բոլոր մրցակիցները հաւասար կարելիութիւններ ունին երկրորդ հանգրուան անցնելու: Մասնաւորաբար կազմակերպիչ երկիրն ներկայութիւնը պիտի մղէ միւս երեք խումբերը որ նուազագոյն սխալը չարձանագրեն: Բնականաբար Հարաւային Ափրիկէ ամէն միջոցի պիտի դիմէ, որ առաջին հանգրուանէն դուրս չմնայ: Ուրուկուէյ իր փառքի օրերու փնտուտութիւն մէջ է, իսկ Մեքսիքա եւ Ֆրանսա լաւ կազմերով պիտի մեկնին ափրիկեան ցամաքամաս:

Բ. ԽՄԲԱԿ

Այս խմբակին գլխավոր թեկնածուն, բնականաբար, Արժանթինն է: Ճիշդ է որ վերջին շրջանին ան քիչ մը կաղաց, սակայն ան կը մնայ Ֆուլթայոյի «մեծ»երու շարքին: Նիճերիա միշտ ալ տոկուն կազմով կը ներկայանայ եւ Ա. հանգրուանին կը ցուցադրէ յաջող խաղարկութիւն: Հարաւային Գորէա արդէն Մոնտիային պատմութիւն եւ բաւական փորձառութիւն ունի: Յունաստան կը մնայ խմբակին եւ Մոնտիայի անակնկալը: Բոլորին յիշողութեան մէջ է 2004ի Եւրոպայի աննախընթաց անակնկալը:

Գ. ԽՄԲԱԿ

Անգլիացիք պիտի փորձեն անհաճոյ անակընկալի առջեւ չզտնուիլ: Անոնք թեկնածու են ո՛չ միայն խմբակին, այլեւ Մոնտիայի բաժակին: Մ. Նահանգներ ճիշդ է որ երկար ճամբայ կտրած է Ֆուլթայոյի մարզին մէջ, սակայն տակաւին կայուն կազմ չի նկատուիր: Ալճերիացիք պիտի փորձեն 1982ի սխրագործութենէն աւելին իրագործել եւ անցնիլ Բ. հանգրուան: Սլովենիա արդէն կը նկատուի լաւ կազմ եւ 2002ի իր արդիւնքներէն աւելին կրնայ արձանագրել:

Դ. ԽՄԲԱԿ

Ինչպէս միշտ, գերմանացիք այս անգամ եւս թեկնածու են ախոյեանութեան տիտղոսին տիրանալու: Անոնց գլխավոր մտահոգութիւնը կրնան ըլլալ սերպերը: Այս վերջինները գտումի մրցումներուն կրցան գերազանցել Ֆրանսայի կազմը եւ հասնիլ Մոնտիայի: Աւստրալիացիք ունին լաւ կազմ եւ կրնան անակնկալներ ստեղծել այս երկու խումբերուն համար: Մինչ Ղանա կը նկատուի Ափրիկէի ամէնէն ուժեղ կազմը եւ կրնայ անցնիլ երկրորդ հանգրուան:

Ե. ԽՄԲԱԿ

Հոլանտա-Դանիա մրցումը եւրոպական Ֆուլթայոյի դասական մրցում մը



պիտի ըլլայ: Այս երկու կազմերուն միջեւ մրցումները միշտ ալ եղած են «տաք»: Ճափոն այդքան ալ զօրաւոր չի թուիր ըլլալ: Անոր դերը լուսանցքային կրնայ ըլլալ այս խմբակին մէջ: Մինչ Քամերուն, որ տոկուն եւ փորձառու կազմ մըն է, կրնայ գլխու ցաւ պատճառել եւրոպական երկու կազմերուն:

Զ. ԽՄԲԱԿ

Այս խմբակին մէջ Նոր Զելանտա ամէնէն տկար կազմը ունի: Իտալացիք ճիշդ է որ չունին 2006ի փայլքը, սակայն կը մնան մեծերու շարքին: Փարակուէյ լաւ պատրաստուած է եւ անոր ախորժակները չեն սահմանափակուիր միմիայն առաջին հանգրուանով: Սլովաքիա առաջին անգամ ըլլալով ներկայ է եւ պիտի ուզէ լաւ արդիւնքներով հեռանալ Մոնտիայէն:

Է. ԽՄԲԱԿ

Բնականաբար Պրագի գլխավոր թեկնածուն է խմբակին: Անոր գլխավոր մրցակիցը կրնայ Փորթուգալը ըլլալ, հակառակ անոր որ այս վերջինը նախորդ տարիներու փայլքը չունի: Հիւսի-

սային Գորէա նոր կազմ մըն է, որ կարողացաւ շրջանցել Իրանի, Մէուտական Արաբիոյ նման կազմեր եւ հասնիլ Ափրիկէ: Մինչ Փղոսկրեայ Ափունք նախորդ Մոնտիային նման պիտի չուզէ կանուխ հրաժեշտ տալ ախոյեանութեան:

Ը. ԽՄԲԱԿ

Այս խմբակին մէջ սպանացիք անմրցելի են: Անոնք դժուար թէ տեղի տան իրենց խմբակիցներուն առջեւ: Պայքարը բուռն պիտի ըլլայ Զուիցերիոյ եւ Զիլիի միջեւ: Անոնց միջեւ կատարուելիք մրցումը հաւանաբար ճշդէ խմբակին երկրորդ դերքը գրաւողին անունը: Մինչ Հոնտուրաս անձանօթ կազմ մըն է եւ կրնայ Զուիցերիոյ կամ Զիլիի համար տհաճ անակնկալներ ստեղծել:

Այս խմբակներով եւ Հարաւային Ափրիկէ-Մեքսիքա բացման մրցումով, Յունիս 11ին կը սկսի 2010ի Մոնտիայը: Բարեբախտութիւն է թերեւս, որ այլեւս կանխատեսելի մրցումներ չկան: Ո՛չ մէկ արդիւնք կամ յաղթանակ նախօրոք չէ ապահովուած, ինչպէս որ էր տարիներ առաջ: Այս մէկը բնականաբար աւելի հետաքրքրական կը դարձնէ Մոնտիայը եւ աւելի դիտարժան կը դարձնէ անոր խաղերը:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ը 20 ՏԱՐԵԿԱՆ Է

Թղթակից ԵՐԵՎԱՆ

2 009ի Դեկտեմբերի 2ին լրացավ Հայաստանում սկսված ազգային շարժման վերահիմնադրման 20րդ տարեդարձը: Սփիւռքում գործող Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Հայաստանեան կառույցի վերակազմաւորման աշխատանքների մեկնարկը տրուել էր 1989ին, մի խումբ հայրենասէր ուսանողների նախաձեռնութեամբ: Կազմակերպութիւնը դարձաւ նորանկախ հանրապետութեան պատանկութեան եւ երիտասարդութեան շրջանում գործունէութիւն ծաւայած առաջին հասարակական կազմակերպութիւններից, հսկայական աշխատանք կատարելով արտադպրոցական կրթութեան գործում:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր

Միութիւնն իր առաջին տողանցքն անկախ Հայաստանի մայրաքաղաք Երեւանում կազմակերպել է 90 տարի առաջ: Այն իր շուրջ է համախմբել Յեղասպանութիւնից փրկուած հազարաւոր հայորդիների, որոնց դաւանանքն է եղել՝ «Պատուով երդուած եմ՝ լինել հաւատարիմ Աստուծուն, ծառայել հայրենիքս ու ազգիս...»: Յայտնի մաթեմատիկոս Պետրոս Ատրունու առաջարկած նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացրո՛ւ», մինչեւ օրս էլ դէպի նոր բարձունքներ է առաջնորդում հայ սկսնակներին: Հաւատարիմ մնալով որդեգրած սկզբունքներին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ն այսօր եւս շարունակում է պատրաստել օրինակելի եւ հայրենասէր քաղաքացիներ, որոնք պատրաստ են ջանք ու եռանդ չխնայել երկրի հզօրացման ճանապարհին:

Հայաստանեան կառույցի 20ամեայ



Մարմնամարզի եւ երիտասարդական հարցերու փոխ նախարար Արսէն Քարանեանի ուղերձը կ'ընթերցէ Արսէն Սողոմոնեան:

գործունէութեանը նուիրուած միջոցառմանը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը պատրաստուել էր յաւուր պատշաճի: Հանդիսութեանը ներկայ էին պաշտօնատար անձինք՝ Սփիւռքի, կրթութեան, սպորտի եւ երիտասարդութեան հարցերով նախարարութիւններից, ներկայացուցիչներ Հ.Յ.Դ. Գերագոյն Մարմնից, Հայաստանում ակտիւ գործունէութիւն ծաւայող հասարակական կազմակերպութիւններից, ծնողներ, համախոհներ եւ սկսնակներ կազմակերպութեան բոլոր միաւորներից: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեանն իր խօսքում հպարտութեամբ նշեց, որ



Եղբ. Զրաչ Շմաւոնեան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի «Ոսկէ Շուշանածաղիկ» շքանշանը կը յանձնէ եղբ. Սերոբ Պողոսեանին:

ՇՆՈՐՀԱԴՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ

կազմակերպությունն ունի հզոր պատմություն: «Այսօր շատ ուրախ եմ, որ այստեղ ներկայ են մարդիկ, ովքեր կազմակերպության ստեղծման օրուանից եղել եւ կարծում եմ մշտապէս կը լինեն մեր կողքին: Մեր կազմակերպության պատմության հիմքում ընկած է գաղափարախօսություն, նպատակ: Այս 20 տարիներին ընթացքում հազարաւոր երեխաներ ու պատանիներ են կրթուել սկստակական շարքերում: Նրանց օգնել է սկստակական ոգին, կազմակերպութեանը, կարգապահութեանը, որ նրանք լինեն իրենց ասպարէզում առաջինը, որովհետեւ մենք փորձում ենք պատրաստել մեր երկրին պիտանի քաղաքացիներ, որոնք կը շինացնեն, կը հրգօրացնեն մեր երկիրը»: Եղբ. Հրաչը նշեց, որ սկստակութեանը դիտում է որպէս պետութեան մի մասնիկ, որը միայն օգնում է պետութեանը: «Ցաւօք սրտի, մեր մէջ դեռ այդ գիտակցութեանը չի հասունացել: Այնուամենայնիւ, մենք մնալու ենք մեր հետապնդած նպատակին հաւատարիմ. նպատակ, որը 90 տարի շարունակ հետապնդուել է իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի կողմից եւ որը հետապնդել են մեր աւագ եղբայրները, նպատակ, որի իրագործումը ստանձնել են մի խումբ հայ երիտասարդներ Վարդան Բախշեանի գլխաւորութեամբ: 20 տարիներին ընթացքում ունեցել ենք բազում վերելքներ եւ վայրէջքներ: Սակայն դրանից մէկ բոլոր չի յուսահատուել մեր կազմակերպութեան որեւէ անդամ»: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետն անդրադարձաւ նաեւ բացթողումներին ու ձեռքբերումներին, կարեւորեց միջազգային եւ համահայկական միջոցառումներ կազմակերպելու փորձը, որի վառ ապացոյցը բոլորովին վերջերս Հայաստանում անցկացւած համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերն էին: Իր ելոյթն աւարտեց մաղթանքով, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը հզօրանայ ու դառնայ մեր պետութեան բարեկեցիկ կեանք ապահովողը:

Հիւրերի ուշադրութեանը ներկայացուցեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կենտրոնական Վարչութեան կողմից պատրաստուած կազմակերպութեան 20ամեայ գործունէութիւնը լուսաբանող տեսաֆիլմ, որից յետոյ իր գնահատանքի

Հայաստանի ազգային սկստակական շարժում հասարակական կազմակերպութեան հիմնադրման 20ամեակի կապակցութեամբ ջերմ շնորհաւորանքներս եմ յղում երիտասարդ եւ պատանի հայ սկստակներին:

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տարիներին երկրի սոցիալ-տնտեսական զարգացման եւ հասարակական առաջընթացի գրեթէ բոլոր բնագաւառներում իր ակտիվ մասնակցութիւնն ու արժանի ներդրումն է ունեցել նաեւ կազմակերպութեան երիտասարդութիւնը: Չկայ որեւէ ոլորտ՝ մշակոյթ, կրթութիւն, գիտութիւն, սպորտ, ձեռներէցութիւն, կառավարում եւ այլն, որտեղ առկայ խնդիրներն ու հիմնահարցերը այս կամ այն կերպ չառնչուեն երիտասարդութեան հետ կամ չյուզեն նրան: Կարելիութիւնն էմ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տարիներին ստեղծուած երիտասարդական հասարակական կազմակերպութիւնների ներդրումը պետութեան եւ քաղաքացիական հասարակութեան կայացման ու զարգացման ճանապարհին: Այս առումով իր ուրոյն աւանդն ունի Հայաստանի ազգային սկստակական շարժումը, որն իր 20ամեայ գործունէութեամբ անգրանահատելի ծառայութիւն է մատուցել թէ՛ պետութեանը եւ թէ՛ հասարակութեանը՝ լինելով անկախ Հայաստանի պետական ու հասարակական-քաղաքական բազմաթիւ երիտասարդ, սակայն արդէն իսկ արհեստավարժ գործիչների դարբնոց: Յատկապէս կարելիութիւնն էմ Հ.Ա.Ս.Կ.ի անգնահատելի դերը Հայաստանում երիտասարդական քաղաքականութեան կայացման ու զարգացման հարցում, Հայաստան-Սփիւռք երիտասարդական համագործակցութեան ու կապերի ընդլայնման ասպարէզում:

Երիտասարդական պետական քաղաքականութեան արդիւնաւէտ իրականացումն էապէս պայմանաւորուած է երիտասարդութեան, յատկապէս երիտասարդական հասարակական կազմակերպութիւնների գործունէ մասնակցութեամբ, որը պէտք է դրսեւորուի համատեղ նախաձեռնութիւնների տեսքով:

Մէկ անգամ եւս ողջունելով Հայաստանի ազգային սկստակական շարժում հասարակական կազմակերպութեան հիմնադրման 20ամեակի կապակցութեամբ՝ ցանկանում եմ հայ երիտասարդութեանը նորանոր բարձունքների յաղթահարում, յաջողութիւններ եւ համարձակ ձեռնարկումներ ի նպաստ հասարակութեան եւ ի շահ մեր պետութեան:

**Սպորտի եւ երիտասարդութեան
Հարցերով Նախարարի Տեղակալ՝
ԱՐՄԵՆ ԲԱՐԱՄԵԱՆ**

խօսքը փոխանցելու հրաւիրուեց Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամ եղբայր Յարութիւն Յարութիւնեանը (խօսքը տեսնել առանձին, էջ 20):

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ն առաջատար դիրքեր է գրաւում նաեւ Համաշխարհային Սկստակական Շարժման ղեկավարման գործում: Դրա վառ ապացոյցն

է 2007 թուականից Եւրասիա սկստակական տարածաշրջանի կոմիտէի նախագահի պաշտօնի ստանձնումը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անդամ եղբ. Բագրատ Եսայեանի կողմից: Իր ելոյթում եղբ. Բագրատը նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը երեխաներին տալիս է ազգային դաստիարակութիւն, Հայաստանի Հանրապետութեանը՝ պատասխանատու, կարգա-



ՄԻՇՏ ՊԵՏՔ Է ԲԱՐՁՐԱՆԱԼ ԵՒ ԲԱՐՁՐԱՅՆԵԼ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ ԵՂՐ. ՅԱՐՈՒԹԻԻՆ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆԻ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԸ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի 20ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպության
Յարգարժան Վարչություն,
Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ,

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Կենտրոնական Վարչութեան անունից պատիւ ունեմ այսօր ներկայ գտնուելու եւ շնորհաւորելու մայր հայրենիքի մեր քոյրերին եւ եղբայրներին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի 20ամեակի առիթով:

Քսան տարի առաջ, այս օրը, երբ փոթորկուած էր հայութեան հոգին եւ համայն հայութիւնը հետեւում էր հայրենիքում տեղի ունեցող իրադարձութիւններին, մի խումբ ուսանողներ (կարելի է ասել խենթեր) արդէն գիտէին, զգում էին, վստահ էին, որ նոր՝ խառնիճաղանձ ժամանակներ են գալիս եւ սերնդափոխութիւնը հարթ չի ընթանալու: Նրանք նախաձեռնեցին եւ վերահիմնեցին Հայաստանում սկաուտական շարժումը: Պէտք էր, անհրաժեշտ էր: Զէ որ ծնունդ էր երեխան՝ Անկախ Հայաստանը եւ ստեղծուեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը:

Եւ ոչ մի տարօրինակ բան չկայ նրանում, որ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը տարիքով աւելի մեծ է, քան Հայաստանի երրորդ հանրապետութիւնը, որովհետեւ հանրապետութիւնը պահող, պահպանող առողջ սերունդ էր հարկաւոր: Որքանո՞վ ստացուեց... Մենք չի որ պէտք է արժեւորենք: Պատմութիւնը կ'ասի իր խօսքը: Բայց 20ամեայ փաստերը արդէն իսկ պարտաւորեցնող են, որ սկսած գործը պէտք է շարունակուի աւելի վստահ, աւելի պարտաճանաչ եւ աւելի ամուր հիմքերով: Միշտ պէտք է բարձրանալ եւ բարձրացնել: Օգնել թոյլերին եւ մնալ տիպար Հ.Մ.Ը.Մ.ական, այնպիսին ինչպիսին եղել եւ մեր յիշողութեան մէջ մնացել են Վահան Չերազներն ու Տիգրան Խոյեանները, Վարդան Բախշեաններն ու Վիգէն Ջաքարեանները, Վազգէն եւ Գարեգին Առաջին Կաթողիկոսները... Նրանք շատ են, մենք ենք քիչ, որովհետեւ նրանք մեծութիւններ են, որոնց անունները ոսկեայ տառերով են դաջուած Հ.Մ.Ը.Մ.ի անդամացուցակներում: Արժանի լինենք եւ մընանք հաւատարիմ նրանց պատգամներին եւ սիրենք մեր մի պտղունց հայրենիքը, որ ժառանգել են մեզ մեր մեծերը: Սիրենք եւ պահպանենք....

Այս յոբելեանական օրուայ առիթով Կենտրոնական Վարչութիւնս ի սրտէ շնորհաւորում է համա-Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի 20ամեակի կապակցութեամբ, նաեւ ի սրտէ շնորհաւորում ենք Համաշխարհային Սկաուտական Շարժման Ժընեւի գրասենեակին եւ մաղթում ամուր համագործակցութիւն եւ սկաուտական կորով, առողջ, առաքինի եւ հայեցի երիտասարդութեան կերտման աշխատանքներում:

- Փառք Հ.Մ.Ը.Մ.ին:
- Փառք հայ ժողովրդին:
- Փառք Հայաստանի Հանրապետութեանը:



Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամ եղբ. Յարութիւն Յարութիւնեան

պահ քաղաքացիներ: «Մենք կարողացել ենք միջազգային շարժմանը տալ ազգային նկարագիր: Իր էութեամբ սկաուտութիւնը աշխարհաքաղաքացի դաստիարակող շարժում է, սակայն Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ն իրենց 90ամեայ եւ 20ամեայ գործունէութեան ընթացքում կարողացել են այդ համամարդկային արժէքը համապատասխանեցնել մեր երազանքներին, մեր ազգային նկարագրին»:

20ամեայ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին շնորհաւորական ուղերձ էր յղել սպորտի եւ երիտասարդութեան հարցերով փոխ նախարար Արսէն Քարամեանը: Այն ընթերցեց նախարարութեան երիտասարդութեան վարչութեան պետ Արսէն Սողոմոնեանը: Ուղերձում կարեւորելով անկախութեան տարիներին ստեղծուած երիտասարդական հասարակական կազմակերպութիւնների ներդրումը պետութեան եւ քաղաքացիական հասարակութեան կայացման ու զարգացման ճանապարհին, փոխ նախարարը նշում էր, որ այդ գործում իր ուրոյն աւանդն ունի Հայաստանի ազգային սկաուտական շարժումը, որն իր 20ամեայ գործունէութեամբ անգնահատելի ծառայութիւն է մատուցել թէ՛ պետութեանը եւ թէ՛ հասարակութեանը՝ լինելով անկախ Հայաստանի պետական ու հասարակական-քաղաքական բազմաթիւ երիտասարդ, սակայն արդէն իսկ արհեստավարժ գործիչների դարբնոց: «Յատկապէս անգնահատելի է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի դերը Հայաստանում երիտա-



Ր.Մ.Ը.Մ.-Ր.Ա.Ս.Կ.ի ատենապետ եղբ. Յրաչ Շմալունեան:



Ր.Մ.Ը.Մ.-Ր.Ա.Ս.Կ.ի փոխ ատենապետ եղբ. Օշին Փիրումեան:

սարդական քաղաքականութեան կայացման ու զարգացման հարցում, Հայաստան-Սփիւռք երիտասարդական համագործակցութեան ու կապերի ընդլայնման ասպարէզում», նշուած էր ուղերձում (ուղերձը տեսնել առանձին, էջ 19):

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Վարչութիւնը չէր մոռացել ղնահատել նաեւ տարբեր

տարիներին կազմակերպութեան ըկառուտական կառույցը առաջնորդած ընդհանուր խմբապետերի աշխատանքը: Այդ պատասխանատու դործն իրենց ուսերին կրած ութ խմբապետերն արժանացան շնորհակալագրերի եւ յուշանուէրների, որոնք յանձնեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամ եղբ. Յարութիւն Յարութիւնեանը

եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Օշին Փիրումեանը: Եղբ. Մանուկ Մանուկեանը եւ եղբ. Վիդէն Եթերեանը, որոնք ընդհանուր խմբապետ են եղել 1991-1993 եւ 1993-1994 թուականներին, Հայաստանում չեն ընակուում. նրանց յուշանուէրները կը փոխանցուեն առաջին իսկ հնարաւորութեան դէպքում:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ն իր բարի աւանդոյթի համաձայն, մինչ օրս զնահատել է աշխատանքը այն մարդկանց, ովքեր մշտապէս եղել են կազմակերպութեան կողքին եւ իրենց բարոյական բարձր աջակցութեան շնորհիւ մնացել են որպէս Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի լաւադոյն բարեկամներ: Այս բարձրադոյն պարզելին՝ «Ոսկէ Շուշանածաղիկ»ին արժանացած նուիրեալների թիւը համայրուեց եւս երկուսով՝ եղբ. Հրաչ Սիսեռեան (Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամ, Ֆրանսիա) եւ եղբ. Սերոբ Տէր Պօղոսեան (Հայաստան):

Made from one single slice of natural Australian opal

Classique®

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

- ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱԱՏ ՀԱՐԻՐԻ ԿԸ ՆՈՒԻՐԷ 150 ՀԱԶԱՐ ԵԻՐՕ

Սեւան Նազարեան
ՓԱՐԻՁ

Արդեօք կարեւոր է յայտարարել, թէ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը այս տարի եւս կազմակերպեց իր տարեկան պարահանդէսը եւ զայն աւարտեց մեծ յաջողութեամբ:

Այո՛, որովհետեւ իւրաքանչիւր մասնաճիւղի յաջողութիւն մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի յաջողութեան, հանդէպ իր անդամներուն, դաղութին եւ ժողովուրդին:

Որովհետեւ երբ մարդիկ կը վստահին այդ միութեան, կը բաժնեն անոր հետ լաւն ու վատը, ներկայ կ'ըլլան անոր հրաւերներուն եւ նեցուկ կը կանգնին անոր կարիքներուն:

Այդպիսի ուրախայի երեկոյ մըն էր Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի պարահանդէսը, 9 Յունուար 2010ին, հայկական Ս. Ծնունդին առիթով, «Մարիթ» պանդոկի շքեղ սրահին մէջ:

Շուրջ 430 հողիի ներկայութիւնը ապացոյցն է, տնտեսական այս դժուարին օրերուն, Հ.Մ.Ը.Մ-ի վայելած վարկին:

Անշուշտ, որ այդ օրուան ընթացքին երդն ու պարը պիտի դառնան տիրող շերտը երեկոյին, սակայն Հ.Մ.Ը.Մ-ի վարչութիւնը, հաւատարիմ իր կոչումին, չէր կրնար անտեսել իր միութեան մէկ այլ յաջողութիւնը, համա-Հ.Մ.Ը.Մ-ական Ցրդ մարզախաղերը, որոնք տեղի ունեցած էին 2009ի ամբան, հայրենի հողին վրայ: Երեկոյին ընթացքին ցուցադրուած տեսարիքը մայրաքաղաք Երեւանի փողոցներուն մէջ կատարուած տողանցքով ու խաղերէն պատառիկներով, յուզում եւ հպարտութիւն կը պարտադրէր իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ-ականի, իւրաքանչիւր հայու, յատկապէս Սփիւռքի տարածքին, որովհետեւ այդ համախմբումն ու իրադրժուածը կը պահանջեն անսակարկ զոհողութիւն եւ աննահանջ երթի որոշում:

Պատրաստուած տեսարիքը, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան աշխատանք, հարստացած էր տեղւոյն մարզիկներուն կողմէ՝ նկարներով, որոնք «տեղական դոյն» մը կու տային Փարիզի մարզիկներուն, որոնք օրին, հաճելի յիշա-



տակներով վերադարձան տուն:

Վարչութեան անունով բարի դալուստ մաղթեց ներկաներուն եւ անոր խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Անդրանիկ Պահարեան, որ ներկայացուց մասնաճիւղին կատարած աշխատանքներն ու հետագայ ծրագիրները՝ մարզական թէ սկստական:

Այնուհետեւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ.

Հրաչ Սիսեռեան: Ան մատնանշեց, թէ Կեդրոնական Վարչութիւնը միշտ եղած է շրջաններու աշխատանքները համադրողը: Եղբայրը նշեց, թէ շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան նման վարչութիւններու ճիւղերուն, 100 մասնաճիւղ հաշուող եւ 26 հազար անդամ ունեցող Հ.Մ.Ը.Մ-ը կը շարունակէ բարդաւաճիլ եւ Սփիւռքի մէջ հասցնել սերունդներ՝ մտաւորականներ, մարզիկներ, քաղաքական դործիչներ եւ այլն:

Եղբ. Սիսեռեան խրախուսեց ներկաները համախմբուելու Հ.Մ.Ը.Մ-ի շուրջ, օգտակար դառնալու անոր, որովհետեւ «Հ.Մ.Ը.Մ-ը ծնաւ ժողովուրդէն, ժողովուրդին համար»:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան հրաւերով կիսաժամեայ ելոյթ ունեցաւ «Երազ» պարախումբը: Աւելի քան 20 երիտասարդ-երիտասարդուհիներ հայկական պարերով երեկոյին տուին այլ երանգ:

Երեկոն խանդավառելու բաժինը վստահուած էր ծանօթ երգիչ Ատիա Հարմանտեանին ու իր նուազախումբին, որ մինչեւ առաւօտեան ժամերը ուրախ մթնոլորտ ստեղծեց ներկաներուն մօտ: Խանդավառուած մթնոլորտէն՝ կատարուեցան նուիրատուութիւններ: Մասնաճիւղի նոր կեդրոնի դընման անձեռնմխելի դուամարին հաշուոյն, Լիբանանի վարչապետ Սաստ Հարիրի նուիրեց 150 հազար եւրօ:

Բարձրին ու լաւին ձգտիրը, լաւադոյնին կրնայ առաջնորդել ու հասցնել, եւ կը վստահիք Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւններուն...:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԲԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 14ՐԴ ՄԱՐԶԱՆԱՂԵՐԸ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ԻՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳՈՐՏՈՊԱՅԻ ՄԷՋ

**Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային
Ամերիկայի Շրջ. Վարչութիւն
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ**

Սիրւոքահայ երիտասարդուժիւնը քով-քովի բերելու վճռականութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի շրջանը 2009ին եւս ձեռնարկեց Նաւասարդեան իր մարզախաղերուն: Այս անգամ հիւրընկալ մասնաճիւղն էր Գորտոպան, որ իր հիմնադրման 30ամեակը կը տօնէր: Գորտոպա մեկնեցան շրջանի միւս երկու մասնաճիւղերու պատուիրակուժիւնները՝ Պուէնոս Այրէս եւ Մոնթեվիդէո: Ներկայ էին նաեւ Պրագիլի Սան Փաուլօ քաղաքի «ՍԱՄԱ» ակումբի եւ Արժանթինի Ռոսարիօ քաղաքի հայկական գաղութին պատուիրակուժիւնները, որոնք յատկապէս հրաւիրուած էին՝ մասնակցելու համար երիտասարդական այս կարեւոր ձեռնարկին: Կարեւոր է մանաւանդ այս



օրերուն, երբ փորձի տակ կը դրուի հայ մնալու մեր համոզումը, որուն համար մեր համայնքը այսքան տարի պայքարած է: Հ.Մ.Ը.Մ. այսպէսով ցոյց կու տայ, որ պիտի չնահանջէ եւ ընդհակառակը՝ աւելի ուժով պիտի շարունակէ մեր ազգային ինքնութիւնը պահպանելու աշխատանքը:

Շաբաթ, 10 Հոկտեմբերին, մասնակիցները սկսան հասնիլ մարզահամալիր, ուր տեղի պիտի ունենային ծրագրուած մարզախաղերը: Երբ 375 մասնակիցները, մարզիկները եւ սկաուտները տեղաւորուած էին, ազգանշանը տրուեցաւ տարբեր մարզաձեւերու մրցումներուն (Ֆութպոլ, վոլիպոլ, պասքեթպոլ, փինկ-փոնկ եւ թենիս):

Յետմիջօրէին, բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի ակումբին մէջ: Հակառակ եղանակին անպատեհութեան, բացումը կատարուեցաւ մեծ





խանդավառութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ական ողիով, շնորհիւ մասնակիցներու բարձր տրամադրութեան: Արարողութիւնը սկիզբ առաւ պատուիրակութիւններու մոտաքով: Մարզիկները կարմիր, կապոյտ, նարնջադոյն շապիկներ հագած՝ քով-քովի դալով հայկական դրօշակին դոյներով տպաւորեցին բոլորը:

Այնուհետեւ, երեք մասնաճիւղերու սկաուտական խումբերը կատարեցին տողանցք: Արարողութեան ընթացքին, մասնակից միութիւններու ղեկավարները դրօշակները բարձրացուցին եւ լսուեցան Ուրուկուէյի, Պրագիլի, Արժանիքի եւ Հայաստանի քայլերդները: Վերջինին կատարուած յանձն առաւ Գառնիկ Սարգիսեան, որ Գորտոպայի

եղբայրներուն կողմէ յատկապէս հրաւիրուած էր, որպէսզի այդ երեք օրերուն ընկերանար երիտասարդներուն:

Ապա, իր խօսքը ուղղեց Գորտոպայի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սամի Մերտինեան, իսկ խաղերուն օրհնութիւնը կատարեց Երեմիա Քահանայ Խաչատրեան: Վերջապէս, խաղերուն ջահը բոցավառեցաւ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան խօսքը ուղղեց եղբ. Տանիէլ Ճուպէյեան: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ Նաւասարդեան 14րդ մարզախաղերը պաշտօնապէս բացուած յայտարարեց:

Յաջորդ օր, բոլոր մասնակիցները եւ ընկերակցողները ուղղուեցան Գորտա-

պա քաղաքի Սարմիէնթօ այգին, ուր Նաւասարդեան խաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ հինգ քրիմեթր վազքի մրցում, որուն մասնակցեցան մարզիկներ, ինչպէս նաեւ ընկերակցողներ, վազելով կամ քայլելով: Իրենց միակ նպատակն էր մասնակցիլ եւ վերջնագիծին հասնիլ, խանդավառ եւ ընկերային մթնոլորտ ստեղծելով: Մրցումին աւարտին բոլորը տեղափոխուեցան մարզահամալիր, ուր մասնակցեցան մնացեալ մրցումներուն:

Կէսօրէ ետք, բոլոր մասնակիցները հաւաքուեցան սրահին մէջ, ունկնդրելու համար Հ.Մ.Ը.Մ.ի այժմէական նիւթերու մասին դասախօսութիւններ: Մարզախաղերու մասին խօսեցան եղբայրներ Արթին Մերտինեան եւ Խաւիէր Խաչատրեան, սկաուտական հարցերու մասին՝ քոյր Ռոմինա Յովհաննէսեան եւ եղբայր Ակոսթին Անայեան: Անոնք անդրադարձան Հայաստանի մէջ առաջին անգամ ըլլալով տեղի ունեցած համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն եւ Լոս Անճելըսի մէջ կատարուած Վկայեալ կարգի ղեկավարներու դասընթացքին:

Յաջորդեց Խաչիկ Տէր Ղուկասեանի կողմէ տրուած կարեւոր դասախօսութիւն՝ հայ ազգային իրականութեան մասին: Դասախօսը՝ Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, մանրամասնօրէն ներկայացուց նիւթը, որուն մեծ հետաքրքրութեամբ եւ ուշադրութեամբ հետեւեցան ներկայ մարզիկ-մարզիկուհիները:

Երեկոյեան, երիտասարդները հաւաքուեցան «Ինթէր Փլազա» հիւրանոցին սրահը: Տեղի ունեցաւ մարզիկներու աւանդական պարահանդէսը, մինչ «Անդրանիկ» ակումբին մէջ կատարուեցաւ պատասխանատուներու ընթրիքը:

Երկրորդ օրը, տարբեր մարզախաղերու աւարտական խաղերէն ետք կատարուեցաւ խաղերու փակման արարողութիւնը, ուր եղբայրական խանդավառ մթնոլորտի մէջ կատարուեցաւ բաժակներու բաշխումը: Հրաժեշտի խօսք ուղղեց Գորտոպայի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սամի Մերտինեան: Յուշադրուեցաւ նաեւ տեսերիզ մը՝ նուիրուած Գորտոպայի մասնաճիւղի

հիմնադրման 30ամեակին: Մասնաճիւղ, որ յաջողաբար երկրորդ տարին ըլլալով արժանացաւ «Challenger» բաժակին:

Այնուհետեւ, հայերէն եւ սպաներէն լեզուներով իր պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գարրոս Սէֆէրեան: Ան շնորհաւորեց «Անդրանիկ» ակումբը՝ այս ձեռնարկին յաջողութեան ի խնդիր իր ցուցաբերած նուիրումին եւ տքնաջանութեան համար, նոյնպէս Շրջանային Վարչութիւնը՝ խաղերուն կազմակերպման եւ համահ. Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն եւ Վկայեալ կարգի դասընթացքին մասնակցութեան համար: Եղբայրը իր խօսքին մէջ անդրադարձաւ հայ-թրքական համաձայնութեան ստորադրութեան հանդէպ Հ.Մ.Ը.Մ.ի յստակ դիրքորոշման, որ արտացոլուած է Կեդրոնական



Վարչութեան հրապարակած յայտարարութեամբ: Եղբ. Սէֆէրեան շեշտեց, որ սկզբունքը պէտք չէ մոռնալ՝ մէկ ազդ, մէկ հայրենիք, որմով դէմ պիտի դնենք մեր իսկական թշմամբին՝ թուրքին, միշտ պահպանելով Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի համար պայքարելու մեր սկզբունքը:

Այսպէսով, մեծ յաջողութեամբ աւարտեցան Նաւասարդեան 14րդ մար-

զախաղերը, Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի 30րդ յոբելեանին տարին: Այս յաջողութիւնը պատահական չէր, այլ արդիւնք էր մասնաճիւղի քայրերուն եւ եղբայրներուն տարած մեծ աշխատանքին եւ ջանքերուն: Անոնք կազմակերպեցին եւ յառաջ տարին շրջանի Հ.Մ.Ը.Մ.ականներուն կողմէ սպասուած այս ձեռնարկը եւ յաջողեցան մեր միութենական նպատակը կատարել՝ հայ երիտասարդու-

թիւնը համախմբել մարզանքի միջոցով, որպէսզի անոնց արժէքները ամրանան, որպէս իրենց հողէն աքսորուած մարդոց զաւակներ, որոնց համար Հ.Մ.Ը.Մ.ը պիտի շարունակէ պայքարիլ մինչեւ նպատակներու իրականացումը՝ Յեղասպանութեան ճանաչումը թուրքիոյ կողմէ եւ բռնադրուեալ հողերու վերադարձը:

Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՆՏՈՆԻ ՄԱՍՆԱԾԻԼԻ 30ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԲՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Մելինե Ժագոպ ԼՈՆՏՈՆ

ՀՄԸՄ-ի Լոնտոնի մասնաճիւղի 30ամեակը տօնախմբելու համար, մասնաճիւղի սկաուտները կազմակերպած էին իրենց բանակումը, որ տեղի ունեցաւ «Կիւլվէլ Փարք»ի մէջ:

Բանակումին հրաւիրուած էին եւրոպական երկիրներէ սկաուտներ, միասնաբար տօնախմբելու նշեալ կարեւոր առիթը:

Միանալով լոնտոնեան 5-15 տարեկան սկաուտներուն՝ Պուլկարիայէն 5, Շուէտիէն 26 եւ Ֆրանսայէն 16 սկաուտներ մէկ շարժուան ընթացքին դործնականացուցին կիրականօրեայ իրենց սորվածները:

Պատասխանատուներն ու օգնականները լրջօրէն աշխատեցան ստեղծելու մթնոլորտը, ուր եղբայրներ եւ քոյրեր կարողացան միասնաբար դործակցել, նկատի ունենալով որ տարեկան բանակում մը միացումն է այն դժուար աշխատանքին, ուր իւրաքանչիւր անդամ կը ներմուծէ իր դիտցածն ու սորվածը:

Շրջաններէն ժամանած սկաուտները նպաստեցին մթնոլորտին զօգման եւ ցուցուցին այն միտքը, թէ Լոնտոնը շատ փոքր մասնիկն է միջազգային այն մեծ միութեան, որ աշխարհի տարածքին կը հաշուէ աւելի քան 25 հազար անդամ:

Մրցակցութիւն ստեղծելու նպատակով բանակավայրը բաժնուած էր երկու մասի: «Կայծակ» եւ «Կարիճ» փորձեցին իրենց լաւագոյնը տալ՝ ճշդապահութեան, մաքրութեան, խաղերու եւ խանդավառութեան առումով:

Բանակումի ընթացքին փոխանցուե-



ցան սկաուտական նիւթերով դասախօսութիւններ՝ կողմնացոյց, կապ, կրակ, կացին, դանակ, շտապ օգնութիւն եւ այլն: Հայ Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդ Նաթան Եպս. Յովհաննէսեան իր ներկայութեամբ պատուեց բանակավայրը եւ հայկական եկեղեցւոյ նուիրուած նիւթերով ելոյթ ունեցաւ: Փոխանցուեցան նաեւ ազգային նիւթերով դասախօսութիւններ:

Բանակումին առիթով հիւր սկաուտները շրջեցան Լոնտոնի տեսարժան վայրերը՝ քաղաքին յատուկ հանրակառքերով:

Կիրակի, ծնողներ եւ դաղութահայեր այցելեցին բանակավայր՝ տեսնելու կատարուած աշխատանքները եւ մասնակցելու խարոյկին, ճաշակելով նաեւ աւանդական խորովածը:

Այդ օր բանակավայր ներկայ դատուեցաւ Անդրոյ մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Վահէ Գարբիէլեան, որ իր քաջալերական խօսքերը փոխանցեց եւ խրախուսեց ապագայ սերունդը: Խորհուրդին անունով ելոյթ ունեցաւ բանակումի խմբապետ եղբ. Պետրոս Մարտիրոսեան: Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Արմանտ Աբրահամեան: Անոնք նշեցին, թէ

ՀՄԸՄ-ի Լոնտոնի մասնաճիւղը յաղթահարելով բոլոր դժուարութիւնները, ինչպէս անցեալին, պիտի կարենայ դործել յառաջիկայ 30 տարիներուն եւս:

Գործը դժուար է, սակայն համբերութիւնը որ գոյութիւն ունեցած է անցնող 30 տարիներուն կրնայ շարունակուիլ եւ մասնաճիւղը պիտի յաջողի պահպանել հայ դաղութը յառաջիկային եւս:

Տարեկան բանակումը մեծ առիթ մըն էր մասնաճիւղին համար փաստելու, որ տակաւին ոտքի է, յառաջ կ'երթայ եւ նոր սերունդին ու կրտսերները ապագան են միութեան:

Ստեղծուած մտերմիկ յարաբերութիւնը, որ գոյութիւն ունէր բանակավայրէն ներս, վստահաբար պիտի շարունակուի յառաջիկային եւս:

ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

ՀՄԸՄ-ի Լոնտոնի մասնաճիւղին 30ամեակը տօնուեցաւ նաեւ պարահանդէսով, «Թարա Թափթոն» պանդոկին մէջ, շուրջ 200 հոգիի ներկայութեան: Կազմակերպիչ յանձնախումբի ժրջան աշխատանքին արդիւնքով իրադործուեցաւ ան, որ առիթ մըն էր միացնելու տարբեր սերունդներ եւ համակիրներ:

Մուտքին ցուցադրուեցան նկարներ ՀՄԸՄ-ի Լոնտոնի կեանքի տարբեր առիթներէն քաղուած՝ մարզական, սկաուտական եւ այլ: 30 տարուան նկարներու ընդմէջէն յիշուեցան դէմքեր ու անցեալ մը ամբողջ:

Իւրաքանչիւր սեղանի վրայ տեղադրուած էին տարբեր տասնամեակներու նուիրուած նկարներ, որոնք ստեղծեցին մեծ հետաքրքրութիւն:

Երեկոն խանդավառեց երգիչ Ճորճ



Պաղտոյեան:

Ատենապետ եղբ. Արմանտ Աբրահամեան փոխանցեց իր խօսքը: Ելոյթ ունեցաւ նաեւ մասնաճիւղի հիմնադիր անդամներէն եղբ. Արիկ Գրիգորեան, որ զգացուած բառերով ու ի միջի այլոց ըսաւ, թէ՛ «իր սիրտը միշտ Լոնտոնի հետ, է հակառակ անոր որ Մ. Նահանգներ կ'ապրի»:

Կսկիծով յիշուեցաւ եղբ. Հրայր Տէր Գրիգորեանի կորուստը:

Այնուհետեւ, եղբ. Արմանտ Աբրահամեան «Ծառայութեան» շքանշանով պատուեց քոյր Վիոլէթ Թագոսեանը:

30ամեակի կարկանդակը հատուկեցաւ երիտասարդ անգամներու կողմէ:

Մտերմիկ մթնոլորտ ստեղծեց յատ-



կապէս եղբ. Արիկի նուագը, իր իսկ ստեղծագործութիւնը՝ «Միութեան երգ»ը, որուն ծանօթ են Հ.Մ.Ը.Մ.ական շատ մը անգամներ այլ վայրերու մէջ

եւս, երգուեցաւ միասնաբար ու յոտնկայս:

Պատիւ է Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին մաս կազմելը, ու այգ կը զգայ անոր անգամակցած անձը: Առանց Հ.Մ.Ը.Մ.ի շատ մը բարեկամական յարաբերութիւններ գոյութիւն պիտի չունենային, ինչպէս նաեւ ստեղծուած այգքան ջերմութիւն՝ գաղութէն ներս:

Հ.Մ.Ը.Մ.ը ոչ միայն կապեր կը հաստատէ իր շրջանէն ներս, այլ՝ աշխարհի տարածքին: Կը յուսանք որ նոյն մթնոլորտն ու խանգաւառութիւնը կը շարունակուի յառաջիկային եւս: Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱԾԻՂԻՆ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Նորա Պուտագեան ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ



աւատարիմ մնալով «Բարձրացի՛ր-բարձրացու» նշանաբանին, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրծ Համուտի մասնաճիւղի Սկստակական Խորհուրդն ու խմբապետական կազմը 2009-2010 տարեշրջանի իրենց քարոզչական աշխատանքներուն սկսան Նոր Մարաշի Ազգ. Քառասնից Մանկանց Վարժարանէն: Արգարեւ, մասնաճիւղին խմբապետական կազմէն տասը խմբապետներ վարժարանին շրջափակը վերածեցին փոքրիկ բանակավայրի, լարելով վրան եւ եռոտանի: Անոնք կատարեցին նաեւ ձեռային աշխատանքներ:

Այս առիթով, մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտները բաժնուեցան տարիքային խումբերու եւ իւրաքանչիւր խումբի պատասխանատուութիւնը ստանձնեց խմբապետ մը: Մոկլի, գայլիկ եւ արծուիկ խումբերը ուղղուեցան վարժարանին սրահը, ուր իրենց ներկայացուեցաւ մոկլիին պատմութիւնը: Ապա անոնք կատարեցին խաղեր եւ կանչեր:


Արի եւ արեւոյշ խումբերուն տրուեցաւ զասախօսութիւն մը Հ.Մ.Ը.Մ.ի նպատակին եւ գործունէութեան մասին: Կատարուեցաւ նաեւ կապերու ուսուցում եւ հետախուզական



նշաններու ներկայացում:

Յայտագրի աւարտին բոլոր խումբերը հաւաքուեցան վարժարանին շրջափակը, ուր օրուան խմբապետը յայտագիրը նմանցուց բանակումի մը օրուան աւարտին եւ իրենց բացատրեց վրան լարելու եւ անմոռանալի խարուկահանգէս մը ունենալու լաւագոյն ձեւը: Ներկաները պահ մը իրենք զիրենք զգացին խարոյկին շուրջ եւ սկսան երգել զանազան երգեր եւ կանչեր: Աշակերտութիւնը խոստացաւ այնուհետեւ մաս կազմել Հ.Մ.Ը.Մ.ի Պուրծ Համուտի մասնաճիւղի շարքերուն, իր հետ տանելով զանազան գիտելիքներ եւ խոստանալով միշտ պատրաստ ըլլալ տէր կանգնելու հայ ժողովուրդի իրաւունքներուն:

Աւարտին, խմբապետական կազմը իր շնորհակալութիւնը յայտնեց տնօրէնութեան, որ սիրայօժար ընդունեց յայտագրին գործազրուութիւնը: Խմբապետական կազմը խոստացաւ նման յայտագիրներ պարբերաբար ներկայացնել, որպէսզի իւրաքանչիւր աշակերտի մօտ բարձր մնայ ազգային ոգին:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ԿԵԴՐՈՆՏԻ ԲԱՑՈՒՄԸ ԼՃԻՎԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ ՀԱՆԴԻՍԱՑԱԲ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Մարտ Բեյրութի
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

ՀՄԸՄ-ի Արևմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան 2009 տարեշրջանի գործունէութիւնը եզրափակուեցաւ պատմական գեղեցիկ նախաձեռնութեամբ մը, որ 2010ի Ամանորի լաւադոյն նուէրը հանդիսացաւ ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքին: Այսպէս, Կիրակի, 13 Դեկտեմբեր 2009ի յետմիջօրէին, ՀՄԸՄ-ի Իկրլ Ռաքի Գոյորատո պողոտայի 2324 հասցէն ժամադրաւայրը դարձաւ շրջանի ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքի անդամ-անդամուհիներու, վարչական կազմերու, մարզական խումբերու, մեծ թիւով արի-արեւոյճներու, պատկան մարմիններու եւ քոյր կազմակերպութիւններու ներկայացու-

ցիչներու, համակիրներու եւ բազմաթիւ հիւրերու: Շրջանի ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքին երազը իրականացնող նոր կեդրոնի բացումն էր, որ յատուկ հանդիսութեամբ կատարուեցաւ, մեծապէս յուսադրելով ՀՄԸՄ-ական երիտասարդութիւնը: Եռուզեռի մէջ էր ՀՄԸՄ-ի ամբողջ ընտանիքը: Գեղեցիկ զարդարուած բակ փութացած էին բազմաթիւ ՀՄԸՄ-ասէրներ եւ հիւրեր, որոնք հիւրընկալուեցան Շրջանային Վարչութեան կողմէ: Հանդիսութեան բացումը կատարուեցաւ ժամը 3.30ին, դրօշակի արարողութեամբ, զոր կատարեց մասնաճիւղերու արի-արեւոյճներէ կազմուած սկաութական դրօշակակիրներու խումբը, գլխաւորութեամբ Շրջանային խմբապետուհի քոյր Թային Հինտոյեանի: Մ. Նահանգներու, Հայաստանի եւ ՀՄԸՄ-ի քայրերդները նուազեց Շրջ-

ջանային Վարչութեան շեփորախումբը: Զեւոնարկին հանդիսավարութիւնը կատարեց նոր կեդրոնի շինարարական յանձնախումբի անդամներէն եղբ. Վիդէն Դաւիթեան, որ դրօշակի ոգեւորիչ արարողութենէն ետք, բարի գալուստ մաղթելով ներկաներուն, պահը պատմական հանդրուան ընտրուեց, որովհետեւ բացումը կը կատարուի միութեանական կեանքի յաջողութեան կարեւորագոյն միջոցներէն մէկը նկատուող, ՀՄԸՄ-ի սեփական եւ յարմարաւէտ կեդրոնին: Ապա, ան ներկայացուց օրուան պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին՝ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանը, ընկերակցութեամբ Կլեմէնտին Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վազգէն Քհնյ. Աթմաճեանի, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեանը, Հ.Յ.Դ. Կեդրոնա-



կան Կոմիտէի անդամներ Յարութ Մանուկեան, Յարութ Տօնոյեան եւ Գօղօ Թոփալեան, Ազդային Վարչութեան ներկայացուցիչ Ներսէս Մելքոնեան, ՀՕՄԻ Շրջանային Վարչութեան ատենապետուհի Սօսի Փօլատեան եւ փոխ ատենապետուհի Արուս Մելքոնեան, Լոս Անձելլոսի քաղաքապետական խորհուրդի անդամ Հոգէ Հիւզար, անցեալի եւ ներկայի Շրջանային Վարչութիւններու անդամներ, Նաւասարդեանի պատուոյ նախագահներ ու «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի տեսլականին հանդէպ ցուցաբերուող հաւատքին ու աշխատանքային ընթացքին անդրադառնալով, եղբայր Դաւիթեան ներկայացուց կեդրոնի շինարարութեան մասնաբաժնի մասնակցութիւնները:

«Հ.Մ.Ը.Մ.ի յաջողութեան երկու կարեւոր դադանքները շարունակականութիւնը եւ փոփոխութիւնն են: Շարունակականութիւնը՝ անցեալի արժէքներու եւ փորձառութիւններու փոխանցումն է, իսկ փոփոխութիւնը՝ բարելաւելու, նոր դադափարներ ընդունելու եւ կիրարկելու ձգտումն է, որպէսզի իր բարձրագոյն մակարդակին հասնի

Հ.Մ.Ը.Մ.ը», ընդգծեց եղբ. Դաւիթեան եւ բեմ հրաւիրեց Լոս Անձելլոսի քաղաքապետական խորհուրդի անդամ Հոգէ Հիւզարը, որ ողջունելով Հ.Մ.Ը.Մ.ի մուտքը Իկրյ Ռաքի շրջանը, բարձր գնահատեց անոր առաքելութիւնը եւ պատրաստակամութիւն յայտնեց զօրակցելու անոր ծրագիրներուն: Ան առ ի գնահատանք շրջանի երիտասարդութեան մարզանքի եւ դաստիարակութեան միջոցով մաքուր միջավայր ապահովելու կարեւոր դործին, Լոս Անձելլոսի քաղաքապետութեան անունով հռչակադիր մը յանձնեց Շրջանային Վարչութեան:

Եղբ. Սթիւ Արթինեան հռչակադիրը

ստանձնելէ ետք, փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան պատգամը: Ան վերջին քանի մը տարիները պատմական բնորոշելով Հ.Մ.Ը.Մ.ի համար, մատնանշեց արձանագրուած յաջողութիւնները՝ նոր կեդրոններ եւ անձնական բանակավայր ունենալու փաստերով: Ան ըսաւ. «Գրեթէ մէկ դարէ դուրս յուսով եմ ունեցող Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհի տարածքին ապրող միլիոնաւոր կեանքերու վրայ կրցաւ ազդել: Հ.Մ.Ը.Մ.ը մաս կը կազմէ մեր ծաղկող մշակութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ը երիտասարդ սերունդներ իրարու կապած է: Հ.Մ.Ը.Մ.ը կը զօրացընէ, կը դաստիարակէ եւ կը բարձրացընէ»:



Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի գործընթացին մասին խօսելով, եղբ. Արթինեան մատնանշեց զոհաբերութեան այն անսահման ժամերը, որոնք ի դորձ կը դրուին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու ղեկավարներուն, կամաւորներուն եւ ծնողներուն կողմէ, չմոռնալով Հ.Մ.Ը.Մ.ի նուիրատուներու, քոյր կազմակերպութիւններու, համայնքի եւ քաղաքական ղեմքերու մնայուն զօրակցութիւնն ու քաջախիտութիւնը ի նպաստ միութեան վերելքին:

Շարունակելով, եղբ. Արթինեան մատնանշեց նոր կեդ-



րոնի իրականացման աշխատանքներուն առնչվողները եւ յայտարարեց անունները այն բոլոր յանձնախումբերուն եւ անձնակազմներուն, որոնք իրենց ժամանակն ու կարողութիւնները, ուժն ու փորձառութիւնները ի գործ դնելով երազը դարձուցին իրականութիւն:

Եղբ. Արթինեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց ազգային բարերար Քրք Գրիգորեանին, 1988ին կեդրոնին կատարած իր նուիրատուութեան համար, ինչպէս նաեւ այն 119 նուիրատուներուն, որոնց շնորհիւ իրականութիւն դարձաւ Կլինտոնի ձաքսըն պողոտային վրայ դստնուող Հ.Մ.Ը.Մ. Ս. առաջին կեդրոնին դնումը, որուն վաճառքէն դոյացած դումարով կարելի եղաւ դնել Հ.Մ.Ը.Մ. Ս. ներկայ կեդրոնը: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց կեդրոնի երկրաչափական եւ շինարարական աշխատանքները կատարող «Datum Group» ընկերութեան, «Apeline» կանաչապատման ընկերութեան, Շրջանային Վարչութեան պաշտօնէութեան եւ վերջին չորս շրջաններու Շրջանային Վարչութիւններուն, որոնց օգնութեամբ եւ որոշումներուն շնորհիւ, 205 քառ. մեթր տարածութիւն ունեցող կեդրոնէն կարելի եղաւ տեղափոխուել 790 քառ. մեթր տարածութեան վրայ:

Եղբ. Արթինեան երախտադիտութիւն յայտնեց Շրջանային Վարչութեան իր դործընկերներուն, իրենց տեսլականին, նուիրուածութեան եւ ծրագրի գորակցութեան համար, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ. Ս. կեդրոնական Վարչութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, քոյր կազմակերպութիւններուն եւ մասնաճիւղերու քաջախերանքին, ինչպէս նաեւ Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանին, իր հոգեւոր առաջնորդութեան համար:

Այնուհետեւ, եղբ. Սթիւ Արթինեան շնորհակալութիւն յայտնեց կեդրոնի սենեակներու հովանաւորներուն, խոստանալով Յունուարին սկսիլ կեդրոնի «Գէորգ Անտոնեան» սրահին շինարար-



րութեան:

Շրջանի Հ.Յ.Դ. ընտանիքին անունով շնորհակարարական ելոյթ ունեցաւ Արեւմտեան Ամերիկայի կեդրոնական կոմիտէի անդամ Յարութ Մանուկեան, որ դնահատելով Հ.Մ.Ը.Մ. Ս. սերունդներ դաստիարակելու ազդանպաստ աշխատանքները, յայտնեց, որ «Հրճուանքով ու հպարտութեամբ ականատես կ'ըլլանք իր ժողովուրդի ծառայութեան լծուած Արեւմտեան Ամերիկայի Հ.Մ.Ը.Մ. Ս. մեծ ընտանիքի նորանոր նուաճումներուն, անդամներու թուական աճին, դործունէութեան որակային նուաճումներուն, մասնաճիւղերու նոր կեդրոններու եւ մարզադաշտերու ստեղծումին, սեփական բանակաւայրով օժտուելուն, եւ ահա այսօր, այդ բոլոր աշխատանքներու ղեկավար դերադոյն մարմնի՝ Շրջանային Վարչութեան նոր դրասենեակի հիմնումին»:

Հ.Մ.Ը.Մ. Ս. կեդրոնական Վարչութեան անունով սրտի խօսք փոխանցեց փոխ ատենապետ եղբ. Գօղօ Պալեան, որ իր շնորհակարարական ելոյթին մէջ շնորհակալութիւն յայտնեց Քրք Գրիգորեանին եւ կեդրոնի հիմնադիր անդամներուն, յատկապէս ակնարկելով անոնց կարգին եղած, սակայն մեզմէ առ յաւելտ բաժնուած հանդուցեալ Քերոբ Առաքելեանն ու Ժիրայր Պոյաճեանը, որոնք իրենց առաւելադոյն ներդրումը բերած են Հ.Մ.Ը.Մ. Ս. կեդրոն մը ունենալու ծրագրին իրականացման:

Եղբ. Պալեան նաեւ շնորհակալութիւն յայտնեց օրուան բարերարներուն, որոնք կը հովանաւորեն կեդրոնի սենեակներն ու սրահը:

Իր օրհնութիւններն ու Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի կրօնական ժողովի եւ Ազգային Վարչութեան շնորհակարարութիւնները փոխանցեց Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Առաջնորդ հայրը Հ.Մ.Ը.Մ. Ս. Շրջանային Վարչութեան նոր կեդրոնին բացումը տարուան մեծադոյն նուէրը նկատեց նոր սերունդին, մասնաւանդ նկատի ունենալով, որ 2009 տարեշրջանը Արամ Ա. Հայրապետին կողմէ ձօնուած էր հայ երիտասարդութեան:

«Այս օրը անմոռանալի պիտի ըլլայ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. Ս. իր ազգային առաքելութեամբ, իր մեղուաջան աշխատանքով, անկարելին կարելի դարձնելու չափ ազնուական եւ մասնագիտական մօտեցումով իր առաքելութիւնը ի սպաս կը դնէ մեր ժողովուրդի վերելքին: Այո՛, Հ.Մ.Ը.Մ. կը գօրացնէ մեր նոր սերունդը, հողեկան արժէքներով եւ ներուժով: Հ.Մ.Ը.Մ. կը դաստիարակէ մեր մատղաշ սերունդը, անոր ջամբելով բարոյական արժէքներ եւ մարդկային դնահատելի բարեմասնութիւններ: Հ.Մ.Ը.Մ. կը բարձրացնէ մեր ժողովուրդի զաւակները, որովհետեւ դիտէ մանր-մունըր հաշիւներէն վեր մնալով մեծութեան, առաքինութեան, առաքելութեան եւ «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով բարձրացնել մեր ժողովուրդին կորովը, մեր ժողովուրդին կամքը», ընդդէմ Առաջնորդը:

Այնուհետեւ, հաւաքական Տէրունական աղօթքով եւ կրօնական յատուկ արարողութեամբ սկիզբ առաւ կեդրոնին բացման արարողութիւնը, գլխաւորութեամբ Առաջնորդ Հօր եւ Վազգէն Քնճյ. Աթմաճեանի, որուն յաջորդեց ժապաւէնի հատումը, զոր կատարեցին Առաջնորդ Հայրը, Հ.Մ.Ը.Մ. Ս. կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօղօ Պալեանը, Լոս Անձելըսի քաղաքապետական խորհուրդի անդամ

Հոգէ Հիւզարն ու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանը:

Հուսկ, հերթաբար եւ համապատասխան աղօթքով տեղի ունեցան ժապաւէնի հատումները հետեւեալ սենեակներուն:-

●Կեդրոնի նախարար, նուիրուած՝ տոքթ. Վարուժան Սահակեանի եւ տոքթ. Արին Սահակեանի յիշատակին:

●Շրջանային Վարչութեան ժողովատեղին, նուիրուած եղբ. Յովհաննէս Ճանիկ Խաչատուրեանի յիշատակին:

●Վարչական աշխատանքներու գրասենեակը, հովանաւորութեամբ տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեաններուն:

●Շրջանային Վարչութեան պաշտօնէութեան գրասենեակը, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ին երկարամեայ զօրակցող Աշխէն Փիլաւճեանին:

●Հ.Մ.Ը.Մ.ի պատմական թանգա-



րանը, շրջանի առաջին Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Օվայեանի յիշատակին:

●Շրջանային Վարչութեան հաշուապահական գրասենեակը, նուիրուած՝ շրջանի շեփորախումբի հզօրացման մասնակից անդամներէն Յակոբ Պոսնոյեանի յիշատակին:

●Օրհնուեցաւ նաեւ նորոգութեան մէջ գտնուող կեդրոնի սրահը, որ տիկ. Արիս Անտոնեանի հովանաւորութեամբ նուիրուած է իր հանգուցեալ ամուս-

նոյն՝ Գէորգ Անտոնեանի յիշատակին:

790 քառ. մեթր տարածութեամբ այս կեդրոնի վերանորոգման աշխատանքները պիտի աւարտին 2020ի ամրան եւ այնուհետեւ ան պիտի տրամադրուի շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին եւ ինչո՞ւ չէ գաղութին:

Այնքան սպասուած բացման տրպաւորիչ այս արարողութենէն ետք, ուրախ միջնորդողը շարունակուեցաւ յատուկ հիւրասիրութեամբ, որուն ընթացքին ներկաները առիթը ունեցան շրջելու կեդրոնը եւ ծանօթանալու անոր զանազան բաժիններուն: Շրջանային Վարչութեան եւ յանձնախումբերու անդամ-անդամուհիները սիրով պատասխանեցին ներկաներու հարցումներուն:

Պատմական այս ձեռնարկին յաջորդեց Շրջանային Վարչութեան կազմակերպած մասնաճիւղերու Ամանորի հաւաքոյթը:

with the complements of

Restaurant Al-Mayass



ՊԸՐՊԷՆՔԻ «ՍԻՓԱՆ» ՄԱՄՆԱՃԻՒՂԸ ՇՈՒՏՈՎ ԺՈՂՈՎԱՏԵՂԻ ԵՒ ՄԱՐԶԱԴԱՇՏ Կ՝ՈՒՆԵՆԱՅ ՇՐՋԱՆԻ ՆՈՐ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ



Հսկայական ծրագիր է ձեռնարկուածը: Շուրջ երեքուկէս միլիոն տոլարի ընդհանուր ծախսով կեդրոն մը ունենալու գաղափարը կրնայ անիրագործելի «խենթ» ծրագիր մը նկատուիլ այս օրերուն, սակայն Պրըպէնքի եւ յարակից շրջաններու հայութեան համար այլեւս անյետաձգելի պահանջ դարձած սեփական կեդրոն-մարզադաշտ մը ունենալու նպատակը արդէն իսկ մեծ խանդավառութիւն ստեղծած է եւ իր շուրջ հաւաքած է համայնքի բոլոր միութիւններն ու հասարակական գործիչները:

Հ.Յ.Դ. «Աղբայեան» Կոմիտէութեան ներկայացուցիչ Հրանդ Տոսթումեան լաւատես է ու կը վկայէ, որ կեդրոնի ծրագրի իրականացման շուրջ ստեղծուած խանդավառութիւնը յոյս կը ներշնչէ, որ այս մեծ մարտահրաւէրը պատուով գլուխ կը հանուի համայնքի զաւակներուն կողմէ:

Թղթակից ՊԸՐՊԷՆՔ

ՀՄԸՄԻ Պրըպէնքի «Սիփան» մասնաճիւղի մարզիկներն ու սկաուտները այսուհետեւ կարիք պիտի չունենան տեղ փնտռելու ամէն շաբաթավերջի կամ շաբթոսան մէջ երեկոները իրենց փորձերը, ժողովներն ու աշխատանքները կատարելու համար:

ՀՄԸՄԻ շրջանի «Սիփան» մասնաճիւղի վարչութիւնը ամէն ամիս հազարաւոր տոլարներ պարտաւոր էր ծախսելու՝ ապահովելու համար անհրաժեշտ մարզադաշտն ու ժողովատեղին: Վիճակը փոխելու ազդանշանը տրուած է արդէն: Պրըպէնքի հայ համայնքը հաստատ քայլերով սեփական կեդրոն մը գնելու աշխատանքին ձեռնարկած է:

Նոր կեդրոնը, 14.410 քառակուսի մեթր տարածութեամբ, բարձր առաստաղով շէնք մըն է, որուն յարկին տակ կարելի պիտի ըլլայ կառուցել շրջանի գործող բոլոր միութիւններուն գրասենեակները ու... ամէնէն կարեւորը՝ պասքէթպոլի դաշտ մը:

Պրըպէնքի սրտին մէջ գտնուող շէնքին գնման առաջին հիմնական քայլերը առնուած են, գնման առաջարկը ներկայացուած է, համաձայնութիւն գոյացած է ներկայ սեփականատիրոջ հետ, գրամատնային փոխառութեան կարգադրութիւնն ալ եղած է:

Պրըպէնքի մէջ գործող ՀՄԸՄԻ «Սիփան» մասնաճիւղը, Հայ Մշակութային Հիմնադրամը, Հ.Յ.Դ. «Աղբայեան» Կոմիտէութիւնը, Հայ Դատի Յանձնախումբի Պրըպէնքի գրասենեակը, ՀՕՄԻ Արագ Մասնաճիւղը, Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան «Վարագ» մասնաճիւղը, Հ.Յ.Դ. «Կայծակ» պատանեկան միութիւնը, բոլորը միասին ձեռք-ձեռքի տուած՝ կ'աշխատին գոյացնելու անհրաժեշտ նախնական գումարը՝ գնման աշխատանքը քայլ մը եւս յառաջ տանելու համար, կ'ըսէ Տոսթումեան:

Այս աւթիւր յառաջացած է կեդրոնի գնման յանձնախումբ մը, որուն կազմակերպած հանգանակային առաջին կարեւոր ձեռնարկը տեղի պիտի ունենայ շուտով: Տոսթումեան յոյս կը յայտնէ, որ օրինական բոլոր պայմանները կարելի կ'ըլլայ ամբողջացնել՝ հանգանակային այս առաջին ձեռնարկը կատարելու համար նոյնիսկ նոր կեդրոնի շէնքին մէջ՝ 75 E. Santa Anita (First եւ Santa Anita փողոցներու խաչմերուկին):

Կեդրոնի յանձնախումբը նաեւ լծուած է ներքին յարգարման նախապատրաստական բոլոր աշխատանքներու, քաղաքային անհրաժեշտ փաստաթուղթերը եւ արտօնութիւնները ապահովելու գործին:

«Պէտք է ըսել, որ Պրըպէնքի քաղաքային իշխանութեան բոլոր ներկայացուցիչները խանդավառ են ու կը քաջալերեն մեզ, եւ իրենց բարոյական նեցուկով կը խրախուսեն մեր ծրագիրը», յայտնեց Տոսթումեան:



Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան

**Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւն
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ**

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանը յաղթական տարի մը եւս արձանագրեց եւ սրտի մեծ գոհունակութեամբ հրաժեշտ տուաւ 2009ին, մեծ ակնկալութիւններով դիմաւորելու համար 2010ը:

Նոյեմբեր 2008ի Հ.Մ.Ը.Մ.ի Ներկայացուցչական Ժողովէն ընտրուած Շրջանային Վարչութիւնը իր լաւագոյնը ի գործ դրաւ՝ յաջողութեամբ իրականացնելու համար իր ծրագիրները: Շրջանային Վարչութեան կազմը գործեց հետեւեալ կազմով.- Սթիւ Արթինեան (ատենապետ), Մարօ Քէշիշեան, Ռիմա Աբէղի-Սաղրեան, Յովիկ Պետեւեան, Թովմաս Տէօքմէճեան, Խաչիկ Խալաթեան, Անօ Մանսուրեան, Փիէր Մանուկեան, Վարդգէս Շիրտրմեան, Բաֆֆի Խաչատուրեան եւ Ժանօ Գահվէճեան:

Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն մօտէն հետեւեցաւ եւ իր օգտակար ներդրումը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, յանձինն շրջանը բնակող իր փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեանին: Անցող տարի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը այցելեցին եղբայրներ Գարլոս Սէֆէրեան, Կարպիս Գապասազալեան եւ Միհրան Շիմշիրեան, մօտէն ծանօթանալով շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն:

2009 տարին յատկանշական եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու մեծ ընտանիքին համար, որուն շարքերը աւելի խտանալով, շատ մը մասնաճիւղեր պարտադրուեցան նոր կեդրոններ որոնել, որպէսզի իրենց հոգածութեան յանձնուած նորահաս սերունդներուն առողջ միջավայր մը ապահովեն:

Առաջին քայլը Շրջանային Վարչութիւնը առնելով, Ամանորի սեմին, մեծ շուքով իր նոր կեդրոնին բացումը կատարեց: Հ.Մ.Ը.Մ. նաեւ հպարտ սեփականատէրը դարձաւ իր բանակավայրին, ուր շրջանի մասնաճիւղերը ինքնավստահութեամբ այլազան ծրագիրներ պիտի իրականացնեն:

Բնական է, այսօրնով չէր կրնար բաւարարուիլ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը: Օրէ օր բազմացող միութեան շարքերը աւելին կը կարօտին: Այսպէս, շրջանի ամէնէն բազմանդամ, Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի ներկայ կեդրոնը նեղ գալով իր բազում ծրագիրներուն, պարտաւորուած՝ երկրորդ կեդրոն մը գնեց, վերանորոգեց եւ գործածութեան յանձնեց բազմահարիւր իր անդամ-անդամուհիներուն: Հ.Մ.Ը.Մ.ի Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղը բաժնեկից դարձաւ շրջանի նոր կեդրոնի գնման եւ իր մարզաւանդ ունեցաւ շրջանի նոր Հայ Կեդրոնէն ներս:

Ուրախ ենք յայտարարելու, որ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ին ծնունդ տուած Լոս Անճելըսի մասնաճիւղը շուտով պիտի տե-

**ՅԱՂԹԱԿԱՆ
ՏԱՐԻ ՄԸ Հ.Մ.Ը.Մ.Ի
ԱՐԵԻՄՏԵԱՆ
Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ**



կերտ-աշակերտուհիներու:

Աշակերտական եզակի այս մրցումները յատուկ հանդիսութեամբ աւարտեցան 15 Մարտ 2009ին, Կլէնտէյլ Գոլէճի Փուլթայոլի մարզադաշտին վրայ: Հպարտօրէն սողանցեցին մրցող խումբերը եւ ստացան ամիսներու մրցակցութեան արդիւնք հանդիսացող յաղթանակի իրենց բաժակները, որոնց յանձնումին մասնակցեցաւ նաեւ հայագրի ծանօթ Փուլթայոլիստ Ալէքօ Իսկանտարեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը 2009ին եւս մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի միջ-մասնաճիւղային խաղերուն, Օրէնճ Քաունթիի «Սարգարայատ», Փասատինայի «Ազատամարտ» եւ Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղերով: Պասքէթպոլի ախոյեան հանդիսացաւ «Ազատամարտ» մասնաճիւղը, իսկ երկրորդ տեղը գրաւեց «Մասիս»ը:

դափոխուի շրջանի նորակառոյց Հայ Կեդրոնէն ներս, որ կառուցուած է Լոս Անճելըսի սրտին՝ փոքրիկ Հայաստանի մէջ:

Աւելի քան չորս տասնամեակներէ ի վեր շրջանէն ներս գործող Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը այսօր իր 17 մասնաճիւղերով կը հաշուէ աւելի քան ութ հազար անդամ-անդամուհիներ, որոնք միշտ ներկայութիւն են շրջանի հայ իրականութեան ներս:

Հ.Մ.Ը.Մ.ի հոգածութեան յանձնուած երիտասարդ-պարմանուհիները, սկստուտական եւ մարզական բաժանմունքներէն ներս ընդգրկուելով, կը պատրաստուին դառնալ տիպար քաղաքացիներ եւ մասնաւոր ազգանուէր հայեր:

Հ.Մ.Ը.Մ.ի բազմանդամ թեւը մարզականն է, որ կը գլխաւորուի Շրջանային Վարչութեան նշանակած Շրջանային Մարզական Խորհուրդին կողմէ: Անցեալ տարի եւս մարզական կեանքը եռուն էր եւ, ըստ երկրի սովորութեան, գլխաւորաբար կեդրոնացած էր պասքէթպոլի վրայ: Բաւական աշխոյժ էր նաեւ Փուլթայոլը: Յատուկ կարեւորութիւն տրուեցաւ վոլիպոլի, թենիսի, փինկ-փոնկի, թեթեւ ակթլէթի, լողի եւ ճատրակի մարզաճիւղերուն:

Իւրաքանչիւր մարզաճիւղի համար կազմակերպուեցան միջ-մասնաճիւղային մրցումներ: Շատ մը մասնաճիւղեր, իրենց կարգին, մասնակցեցան իրենց քաղաքներու լիկերու մրցաշարքերուն եւ արձանագրեցին լաւ արդիւնքներ:

2009ին, ակնյայտ էին Շրջանային Մարզական Խորհուրդին կազմակերպած Քայիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղերը, բոլորին ծանօթ ՔԱՀԱՄը, որուն 25րդը յաջողութեամբ իրագործուեցաւ, մասնակցութեամբ շրջանի հայկական վարժարաններու 2000է աւելի աշա-

րայատ», Փասատինայի «Ազատամարտ» եւ Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղերով: Պասքէթպոլի ախոյեան հանդիսացաւ «Ազատամարտ» մասնաճիւղը, իսկ երկրորդ տեղը գրաւեց «Մասիս»ը:

Շրջանային Մարզական Խորհուրդը մեծապէս օգտակար հանդիսացաւ մասնաճիւղերու կազմակերպած միջ-մասնաճիւղային մարզախաղերուն, ինչպէս նաեւ կազմակերպեց մարզական պատասխանատուներու եւ մարզիչներու յատուկ սեմինարներ:

Շրջանը 68 հոգինոց մարզական պատուիրակութեամբ մը մասնակցեցաւ 1-8 Օգոստոս 2009ին, առաջին անգամ ըլլալով հայրենիքի մէջ կազմակերպուած Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ մարզախաղերուն: Հպարտութեամբ պէտք է յայտարարել, որ շրջանի պատուիրակութիւնը պատմական այս մրցաշարքին, բացի ճատրակէն, մնացեալ բոլոր մարզաճիւղերու ախոյեանական բաժակներով վերադարձաւ տուն:

Շրջանի հայկական իրականութեան ներս եզակի երեւոյթ



ներկայացնող Հ.Մ.Լ.Մ.ի Նաևասարդեան 34րդ Մարզախաղերը յատուկ հանդիսութեամբ սկիզբ առին Շաբաթ, 9 Մայիս 2009ի առաւօտեան, Կրիֆիթ դբօսայգիէն դէպի Ռոզ եւ Ալէքս Փիլիպոս Ազգ. Վարժարանի բակը առաջին անգամ ըլլալով կազմակերպուած քայլարշաւով:

Այնուհետեւ, «Նաևասարդեան՝ ընտանեկան ակումբ» կարգախօսով առաջնորդուող եւ լայն ժողովրդականութիւն ունեցող այս մարզախաղերը վայելցին հովանաւորութիւնը Նաևասարդեանի անցեալի բոլոր պատուոյ նախագահներուն: «Տիպար Հ.Մ.Լ.Մ.ական»ի տիտղոսին արժանացաւ ծանօթ Հ.Մ.Լ.Մ.ական եղբ. Զաքար Չորպաճեան: Նաևասարդեանի յաղթանակի պարահանդէսը տեղի ունեցաւ Շաբաթ, 27 Յունիս 2009ի երեկոյեան, CBS Studiosի մէջ, աւելի քան 500 մասնակիցներու ներկայութեամբ:

Ամիսներու հետաքրքրական մրցակցութենէ ետք, մարզախաղերը փակման յատուկ հանդիսութեամբ եզրափակուեցան Մ.Նահանգներու անկախութեան օրուան գուգադիպող 2-5 Յուլիսի շաբաթավերջին, Վան Նայսի Պրոմինկհամ Հայ Աթոլի շրջափակէն ներս, Նաևասարդեանի առիթով կազմակերպուած չորսօրեայ փառատօնով: Դպրոցի մարզադաշտը այդ օրերուն մարդկային ծովով հեղեղուած էր՝ հազարաւոր հայորդիներու քաջայերական մասնակցութեամբ: Տողանցեց Հ.Մ.Լ.Մ.ի բովանդակ ընտանիքը եւ մասնաճիւղերը հպարտութեամբ ստացան յաղթանակի իրենց բաժակները:

Նաևասարդեան մարզախաղերուն նուիրուած երախտագիտական երեկոն տեղի ունեցաւ 16 Յուլիսի երեկոյեան, Կլէնտէյի «Կարոուսեթ» ճաշարանը:

Հ.Մ.Լ.Մ.ի Նաևասարդեան 35րդ Մարզախաղերու կազմակերպչական աշխատանքները արդէն իսկ սկսած են եւ լաւ ընթացքի մէջ են:

2009 տարեշրջանին մեծ յաջողութիւններ արձանագրեց նաեւ Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական թեւը, որ Շրջանային Սկաուտական Խորհուրդին գլխաւորութեամբ կարողացաւ նորութիւններով ու հետաքրքրական ծրագիրներով աշխոյժ մթնոլորտ մը ստեղծել սկաուտական կեանքէն ներս:

Շրջանի անցեալի եւ ներկայի խմբապետ-խմբապետուհիները մօտէն հետեւեցան եւ իրենց օգտակար ուղղութիւններով մեծապէս նպաստեցին սկաուտական թեւի հզօրացման:

Իրագործուող Վկայեալ կարգի դասընթացներուն աւելութեւր, շրջանի արի-արեւոյշներէն խմբակ մը մասնակցեցաւ Ամերիկեան սկաուտութեան «WE4-4-08 Վուտ պէճ»ի դեկավարներու մարզումի դասընթացներուն:

Շրջանի սկաուտութիւնը մնայուն ներկայութիւն եղաւ գաղութի կարեւոր ձեռնարկներուն եւ յաճախ դրօշակի արարողութիւններով ճոխացուց անոնց յայտագիրները:

Ապրիլին, յատուկ բժանդրութեամբ կազմակերպուեցան Հայկական Յեղասպանութեան ոգեկոչման սկաուտական ձեռնարկները, որոնց մասնակցեցան շրջանի բոլոր մասնաճիւղերու սկաուտական բաժանմունքները:



Տեաւորներու առիթով, Շրջանային Վարչութիւնն ու մասնաճիւղերու խմբապետական կազմերը դարձեալ հիւրը եղան Մուշեղ Արք. Մարտիրոսեանին:

Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական կարգապահ շարքերը, յատկապէս Նաևասարդեան 34րդ Մարզախաղերու բացման ու փակման դրօշակի արարողութիւնները կատարելով, անգամ մը եւս հպարտանքի առիթներ ընծայեցին հանդիսականներուն:

2009ին եւս յաջողութեամբ իրագործուեցան արի-արեւոյշներու «Շրջան Շուշանածաղիկ» սկաուտական խաղերը, Սան Ֆրանսիսքոյի մէջ: Իսկ տարուան սկաուտական մեծագոյն աշխատանքը հանդիսացաւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնած եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի կազմակերպման վստահուած ցամաքամասային դաստիարակչական բանակումը, որ նուիրուած էր Հ.Մ.Լ.Մ.ի Վկայեալ կարգի եւ խմբապետներու վերաորակաւորման կարեւոր գործին:

Բանակումը տեղի ունեցաւ 3-7 Սեպտեմբեր 2009ին, Հ.Մ.Լ.Մ.ի շրջանի Թեքոյա բանակավայրին մէջ: Բանակումին մասնակցեցան 75 խմբապետ-խմբապետուհիներ Հ.Մ.Լ.Մ.ի Արեւելեան եւ Արեւմտեան Մ.Նահանգներու, Հարաւային Ամերիկայի, Գանատայի եւ Աւստրալիոյ շրջաններէն:

2009ին եւս գնահատելի արդիւնքներ արձանագրեցին Հ.Մ.Լ.Մ.ի արիները ամերիկեան սկաուտութեան (BSA) Verdugo Hills Council-ի կազմակերպած Camporee ծրագրին:

Շրջանային Սկաուտական Խորհուրդը աշխատանք կը տանի հարստացնելու Հ.Մ.Լ.Մ.ի սկաուտական գրակառնութիւնը, յատուկ շեշտը դնելով ազգային եւ միութենական դաստիարակութեան նպաստող նիւթերու պատրաստութեան վրայ:

Շրջանը կը պատրաստուի լաւապէս մասնակցելու 2010ի համա-Հ.Մ.Լ.Մ.ական ընդհանուր բանակումին, որ տեղի պիտի ունենայ 2010ի ամրան, հայրենիքի մէջ:

Լուրջ աշխատանք տարուեցաւ բարեգարգելու 24 էլքոր տարածութիւն [շուրջ 100 հազար քառ. մետր- «Մ.»] ունեցող Հ.Մ.Լ.Մ.ի Թեքոյա բանակավայրը, որ ունի իր գլխաւոր



յանձնախումբն ու գանազան ենթայանձնախումբերը, որոնք ամեն ջանք կը թափեն դիւրացնելու համար բանակավայրէջն ներս իրագործող ծրագիրները:

Այսօր, անվարան կարելի է յայտարարել, որ Հ.Մ.Ը.Մ-ի Թեքոյա բանակավայրը արդիական իր բոլոր միջոցներով տրամադրելի է գաղութին:

2324 Colorado Blvd., Los Angeles, CA 90041 հասցէով, Մայիս 2007ին, սեփական կեդրոնի մը իրականացումը մեծ ոգեւորութիւն ստեղծեց Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին մէջ: Հայ երիտասարդութիւնը համախմբելու ծառայող այս կեդրոնը ունի աշխատանքային լաւ պայմաններ: Կեդրոնի վերանորոգման աշխատանքները աւարտած ըլլալով, 13 Գեկտեմբերին, հանգամանօրէն անոր բացումը կատարուեցաւ, թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի օրհնութեամբ:

2009ին եւս Շրջանային Վարչութիւնը շարունակեց իր սերտ գործակցութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի Հիւսիսային Ամերիկայի շրջաններուն հետ: Այս ծիրէն ներս, շրջանի Հ.Մ.Ը.Մ-ը հիւրընկալեց Հիւսիսային Ամերիկայի մէջ գործող Հ.Մ.Ը.Մ-ի երեք շրջաններու Շրջանային Վարչութիւններու միջ-դիւանական եւ Սկաուտական Խորհուրդներու տարեկան հանդիպումը, որ տեղի ունեցաւ 7-8 Փետրուար 2009ին, շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի նոր կեդրոնէն ներս:

Գեղեցիկ աւանդութիւն դարձած այս հանդիպումին ընթացքին մասնակիցները ծանօթացան շրջաններու աշխատանքներուն, անոնց կարեւոր նուաճումներուն, դժուարութիւններուն եւ յատկապէս քննեցին Հ.Մ.Ը.Մ-ը յուզող հարցեր: Երկօրեայ ժողովներուն մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պայեան:

Հ.Մ.Ը.Մ-ի երեք շրջաններու Շրջանային Վարչութիւններու դիւաններու ժողովին աւելցնելով տեղի ունեցաւ նաեւ նոյն շրջաններու սկաուտ ղեկավարներու միօրեայ հանդիպում:

Երկօրեայ հանդիպումներէն անկախ, ժողովականները առիթը ունեցան մասնակցելու Հ.Մ.Ը.Մ-ի Կլէնտէյի «Արարատ» մասնաճիւղի սկաուտական կիրակնօրեայ աշխատանքներուն, ինչպէս նաեւ այցելեցին Հ.Մ.Ը.Մ-ի Թեքոյա բանա-

կավայրը, որ ձիւնածածկ ըլլալով բացառիկ գեղեցկութիւն մը կը պարզէր:

Բոլոր մասնակիցներն ալ անհուն գոհունակութեամբ հրաժեշտ տրւին իրարու, Փետրուար 2010ին, Մոնթրէյալի մէջ դարձեալ հանդիպելու հեռանկարով:

Դաստիարակչական իմաստով, Շրջանային դաստիարակչական յանձնախումբը աշխատանք տարաւ ամբողջացնելու Հ.Մ.Ը.Մ-ականի մը համար խիստ անհրաժեշտ նկատուող ուղեցոյց գիրքը, որ արդէն իսկ իր վերջնական հանգրուանին հասած է:

Յանձնախումբը փորձեց մասնաճիւղերուն հետ առանձնաբար հանդիպիլ եւ ուղղութիւններ տալ անոնց վարչական եւ կազմակերպչական աշխատանքներուն: Օգտակար այս աշխատանքը պիտի շարունակուի յառաջիկային եւս:

Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան շեփորախումբը շարունակեց փայլք տալ միութեան ներքին եւ շրջանի հրապարակային ձեռնարկներուն: Շեփորախումբի հրամցուցած ազգայնաշունչ եղանակները, Հ.Մ.Ը.Մ-ականի ոգին միշտ վառ պահեցին մեր քոյր-եղբայրներուն մէջ, իսկ հանրութիւնը խրախուսելով՝ աւելի բարձրացուցին անոնց համակրանքը երիտասարդ մեր կազմակերպութեան հանդէպ:

Գեկտեմբեր 5ին, անոնք ընկերակցեցան Մոնթրոպի Ս. Ծընընդեան մասնակցող Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական խումբերուն, իսկ Կիրակի, 6 Գեկտեմբերին, առաջին անգամ ըլլալով մասնակցեցան Սան Ֆեռնանտո Հովիտի Ամանորեայ շքերթին, մեծապէս յուսադրելով շրջանի հայութիւնը:

Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը, գլխաւորելով Հ.Մ.Ը.Մ-ի ՔԱՀԱՄի եւ մանաւանդ Նաւասարդեան շքերթները, հպարտանքի պահեր հրամցուց ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին, այլ նաեւ զայն քաջալերող շրջանի հայութեան:

Հ.Մ.Ը.Մ. շարունակեց իր աշխատանքներուն մասին տեղեակ պահել հանրութիւնը տեղական ու հայկական գրաւոր եւ բանաւոր մամուլի միջոցով: Շաբաթական դրութեամբ, Հ.Մ.Ը.Մ-ի լուրերը հրապարակուեցան «Ասպարէզ»ի շաբաթօրեայ թիւերուն մէջ:

Առիթը պատեհ նկատելով, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութիւնը իր անասման շնորհակալութիւնները կը յայտնէ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի բոլոր անդամ-անդամուհիներուն, շրջանի պատկան մարմիններուն եւ քոյր կազմակերպութիւններուն եւ բոլոր անոնց, որոնք իրենց անասման ծառայութիւններով նպաստեցին Հ.Մ.Ը.Մ-ի վերելքին: Մեր յատուկ շնորհակալութիւնները Արեւմտեան թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանին, որ իր օրհնութիւնները երբեք չզլացաւ Հ.Մ.Ը.Մ-ին:

ԵՂԲ. ՎԱՐՈՒԺ ՄԻՐԶԱՅԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ «ԱՐԾԱԹԷ ԿՈՒՂԲ 2009» ՄՐՑԱՆԱԿԻՆ

Սարո Բեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Հինգշաբթի, 28 Յունուար 2010ի երեկոյան, «Լա Քանիատա Ֆլինթրիճ Քաունթրի Քլաբ»ի սրահին մէջ կազմակերպած տարեկան իր գլխաւոր ձեռնարկին ընթացքին, Ամերիկեան Սկաուտութեան Վրտիկո Հիլզի Խորհուրդը «Արծաթէ Կուղբ 2009» («Silver Beaver») բարձրագոյն մրցանակը շնորհեց չորս սկաուտ ղեկավարներու, որոնց կարգին՝ Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղի հիմնադիր անդամներէն եղբ. Վարուժ Միրզայեանի:

«Արծաթէ կուղբ» մրցանակը կը շնորհուի Ամերիկայի սկաուտութեան այն անդամին, որ կազմակերպութեան ծրագիրներուն ընդմէջէն մեծ ծառայութիւն մատուցած է սկաուտ երիտասարդութեան եւ իր շրջապատին: Միւս կողմէ Beaver այն կենդանին է, որ աշխատասիրութիւն կը խորհրդանշէ, իսկ արծաթը՝ պարզեւատրուող խելացի սկաուտին մագին գոյնը: Միրզայեան առաջին Հ.Մ.Ը.Մ.ականն է, որ Ամերիկեան Սկաուտութեան կողմէ այս պարգևին կ'արժանանայ:

Ահա հպարտալի առիթ մը, որուն ափանտեսը ըլլալու եւ հպարտանքը ապրելու համար ձեռնարկին վայրը փութացած էին աւելի քան 120 Հ.Մ.Ը.Մ.ականներ,



որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական

Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գոգո Պալեան, Հ.Մ.Ը.Մ.ի եւ ՀՕՄի Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի վարչութեան եւ խմբապետական կազմերը, եղբ. Միրզայեանի հետ գործակցած անցեալի բազմաթիւ խմբապետ-խմբապետուհիներ, իր ընտանեկան պարագաները, հարազատներն ու ընկեր-ընկերուհիներ:

Իւրապատուկ այս ձեռնարկին ընթացքին յանձնուեցան նաեւ այլ մրցանակներ բոլոր այն սկաուտ ղեկավարներուն, որոնք իրենց ընտանիքներուն աւելցրած օգտակար հանդիսացած էին կազմակերպութեան զանազան ծրագիրներուն յաջողութեան:

Տպաւորիչ էր նաեւ Ամերիկեան Սկաուտութեան կարեւոր կարգի՝ «Իկոյ Սկաուտ»ի վկայագիրներու եւ պէճերու յանձնումը:

Իրենց պատգամներուն մէջ ելոյթ ունեցողները ընդգծեցին Հ.Մ.Ը.Մ.ի կարեւորութիւնը եւ գործակցութիւնը Ամերիկայի Սկաուտութեան հետ եւ ներկայացուցին ներկայ Վրտիկո Հիլզի Խորհուրդի զանազան բաժանմունքները, որոնց մէջ կը գործեն բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներ: Այդ Հ.Մ.Ը.Մ.ականներու ցատուն օրինակներէն մէկն է եղբ. Վարուժ Միրզայեանը, որ 2007էն ի վեր մեծ ներդրում ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ը Ամերիկեան Սկաուտութեան



հովանիին տակ գործելու եւ առանձին Խորհուրդ դառնալու կարեւոր նախաձեռնութեան:

1989ին, եղբ. Միրզայեան ստացած է Ամերիկեան Սկաուտութեան բարձրագոյն «Wood Badge»ի կարգը եւ անդամ է Վրտիկո Հիլզի Խորհուրդին: Այնուհետեւ, քանի մը դասընթացքներու դասախօսական կազմերուն մաս կազմելէ ետք, 1997ին, ան ղեկավարած է նոյն դասընթացքները, իբրեւ ընդհանուր խմբապետ:

Եղբ. Միրզայեանի վաստակը մեծ է յատկապէս շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի կեանքէն ներս: Ան Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի հիմնադիր անդամներէն է: Ստանձնած է զանազան պատասխանատու պաշտօններ՝ մասնաճիւղի սկաուտական եւ վարչական մարզերէն ներս: Եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու սկաուտական բաժանմունքի ընդհանուր խմբապետ եւ Շրջանային Վարչութեան անդամ: Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Ընդհանուր ժողովներու եւ իր օգտակար ներդրումը ունեցած է անոնց կարեւոր որոշումներուն մէջ:

Եղբ. Վարուժ Միրզայեանի պարզեւատրումը մեծ ոգեւորութեամբ ընկալուեցաւ յատկապէս ներկայ Հ.Մ.Ը.Մ.ականներուն կողմէ:

Այս ուրախ առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը եւ իր անդամակցած Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղի վարչութիւնը եւս յատուկ գնահատագիրներ յանձնեցին եղբ. Միրզայեանին:



Հ.Մ.Ը.Մ.Ի «ՄԱՍԻՍ» ՄԱՍՆԱՃԻՂԻ ՖՈՒԹՊՈՒԿ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՂԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

ՀՄ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի մարզական կեանքը եռուն է: Այս մեծ ընտանիքի մարզիկ-մարզիկուհիները միշտ ալ գրադած են շրջանէն ներս կազմակերպուող մարզական գանազան մրցաշարքերով: Բոլորիս ծանօթ է, թէ յատկապէս Միացեալ Նահանգներու մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ պասքեթպոլի մարզաձիղը եւ այս շրջանը գանազան դասակարգերու աւելի քան 300 խումբեր ունի:

Այսուհանդերձ, մեծ ճիգ կը թափուի քաջալերելու զարգացումը այլ մարզաձիղերու, որոնց կարգին յատկապէս

Ֆութպոլը: Այս իմաստով գեղեցիկ նախաձեռնութիւն մը կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի Սան Ֆեռնանտօ Հովիտի «Մասիս» մասնաձիղի մարզական խորհուրդը, կազմակերպելով Ֆութպոլի (Mini Soccer) միջ-մասնաձիղային մրցաշարք մը, հրաւիրելով Հ.Մ.Ը.Մ.Ի Օրէնս Բաունտի «Սարգարապատ» եւ Ինլընտ Էմփայրի «Արագ» մասնաձիղերը:



Մրցաշարքը նուիրուեցաւ «Մասիս» մասնաձիղի հիմնադրութեան 30ամեակին:

Երեք մասնաձիղերու Ա., Ե. եւ Է. դասակարգերու երկսեռ խումբերու միջեւ ընթացող այս մրցաշարքը տեղի ու-

նեցաւ 21-22 Նոյեմբեր 2009ի շաբաթավերջին, Սրբոց Նահատակաց Ֆերահեան Ազգային վարժարանի Փարթինիա համալիրի ֆութպոլի դաշտին վրայ:

Երկօրեայ այս գեղեցիկ մրցաշարքին ակնյայտ էր ծնողներու ներկայութիւնը, որոնք լրջութեամբ հետեւեցան մրցումներուն եւ իրենց ծափահարութիւններով քաջալերեցին իրենց զաւակները:

«Ինձի համար կարեւոր չէ յաղթանակը կամ պարտութիւնը: Կարեւորը իմ զաւկիս մաքուր միջավայրի մէջ ըլլալն է, որուն համար մեծապէս երախտապարտ եմ Հ.Մ.Ը.Մ.Ին եւ այս պարագա-



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europohotel.am

www.europohotel.am

յին Հ.Մ.Լ.Մ.ի «Մասիս» մասնաճիւղին», ուրախութեամբ հաստատեց մրցող մարզիկուհիներէն մէկուն ծնողը:

Իսկ մրցաշարքի կազմակերպիչ «Մասիս» մասնաճիւղի վարչութեան մարզական պատասխանատու եւ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի ֆութպոլի երբեմնի աստղերէն եղբ. Սաբո Սաբայեան մեծ գոհունակութեամբ փոխանցեց, թէ «Մասնաճիւղը նման մրցաշարքեր պիտի շարունակէ կազմակերպել, որպէսզի հետզհետէ ֆութպոլը տիրական ներկայութիւն ըլլայ Հ.Մ.Լ.Մ.ի մարզական կեանքէն ներս: Այս իմաստով մեծ հետաքրքրութիւն կայ յատկապէս փոքրերու մօտ, որոնց ծնողները ամէն շաբաթ մարզադաշտ կը բերեն իրենց զաւակները եւ հաճոյքով կը հետեւին անոնց փորձերուն: Փոքր խումբերուն մէջ ակնյայտ է նաեւ իգական սեռի ներկայութիւնը, որ մեծապէս քաջայերելի է: Պէտք է զարկ տալ ֆութպոլի զարգացման Հ.Մ.Լ.Մ.էն ներս»:

Պէտք է ընդգծել, որ Հ.Մ.Լ.Մ.ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղը շրջանի Հ.Մ.Լ.Մ.ի աշխոյժ մասնաճիւղերէն մէկն է, որուն 30ամեակն էր անցեալ տարի: Այս ուրախ առիթով, 2009 տարեշրջանի բոլոր աշխատանքները նուիրուեցան այս տարեդարձին:

ՄՐՑԱՇԱՐՔԻՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ Ա. ԴԱՍԱԿԱՐԳ

- 1. Հ.Մ.Լ.Մ.ի «Մարդարապատ» մասնաճիւղ
 - 2. Հ.Մ.Լ.Մ.ի «Արագ» մասնաճիւղ
 - 3. Հ.Մ.Լ.Մ.ի «Մասիս» մասնաճիւղ
- Ե. ԴԱՍԱԿԱՐԳ**
- 1. Հ.Մ.Լ.Մ.ի «Մասիս» մասնաճիւղ
 - 2. Հ.Մ.Լ.Մ.ի «Մարդարապատ» մասնաճիւղ
- Է. ԴԱՍԱԿԱՐԳ**
- 1. Հ.Մ.Լ.Մ.ի «Մասիս» մասնաճիւղ
 - 2. Հ.Մ.Լ.Մ.ի «Մարդարապատ» մասնաճիւղ

Իրենց բացառիկ խաղարկութեան համար գնահատանքի բաժակներ ստացան հետեւեալ մարզիկները. - Էնթրնի Քէշիշեան, Արմանտ Հայրապետեան, Վիգէն Քէքէճեան, Արա Մինասեան, Կրէկորի Քոտիբեան, Արա Աշճեան եւ Ատնի Շէկեան:

ԵՂԲ. ՀՐԱՅՐ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Տարի մը առաջ, Յ.Ս.Ը.Ս.ի Լոնտոնի մասնաճիւղը կորսնցուց իր հիմնադիր անդամներէն եղբ. Գրայր Տէր Գրիգորեանը, որուն անժամանակ կորուստը ժանր եղաւ իր ժանօթներուն եւ Յ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքին համար:

Եղբ. Գրայր Տէր Գրիգորեան վերջին երկու տասնամեակներուն հաստատուած էր Մ. Նահանգներ՝ հանրաճանաչ աշխատանքներով կապուած մնալով Յ.Ս.Ը.Ս.ին եւ անոր հետապնդած նպատակներուն:

Եղբոր մահուան տարելիցին առիթով, «Մարզիկ» կ'ոգեկոչէ անոր յիշատակը եւ ընթերցողներուն կը ներկայացնէ վաստակաշատ կեանքը բնութագրող ակնարկ մը:

Եղբ. Հրայր Տէր Գրիգորեան ծնուել է 8 Յունուար 1954ին, Թեհրանում: Հինգ տարեկանից, մի շարք պատանի ընկերների հետ միացել է Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան: Մինչեւ իր 18 տարեկանը լրացնելը, Հրայրը դաստիարակուել ու հետագային ստանձնել է մի շարք սկստական տարբեր պաշտօններ:

Հրայրը իր ուսման բերմամբ հետագային անցնում է Լոնտոն եւ 1979ին, պատահաբար հանդիպելով իր երիտասարդական եւ սկստական շարքերից անցած մի քանի ընկերներին, միասնաբար որոշում են աջակցել ու իրականացրել Անգլիայի մէջ հայ սկստական շարժում ստեղծելու գաղափարը: Այդ գաղափարի իրականացման առաջին խիստ օրերին, երբ ժողովներ էին տեղի ունենում Լոնտոնի Հայ Տան սրահին մէջ, Հրայրի եւ իրեն աջակցող ընկեր-ընկերուհիների գոհողութիւններով կեանքի է կոչւում եւ հիմնադրւում է Անգլիայի Հայ Սկստական Միութիւնը, որը ամիսներ վերջ միանում է Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքին եւ դառնում է միութեան 50րդ մասնաճիւղը:

Նրա համար սկստական շարժումը ինքնանպատակ չէր, նրա համար Հ.Մ.Լ.Մ.ի առաքելութիւնը միջոց էր իրար շուրջ հաւաքելու, հայաշունչ պահելու այդ օրերի երիտասարդ սերունդը, որը ընտանիքից ու հարազատից հեռու անցել էր Անգլիա:

Հրայրի եւ Հ.Մ.Լ.Մ.ի օրուայ դեկավարների շնորհիւ 1981 թուականին Անգլիայում տեղի ունեցած համաշխարհային սկստական բանակումին, Հ.Մ.Լ.Մ.ի Լոնտոնի մասնաճիւղը ներկայացաւ որպէս Հայաստանի սկստաներ եւ Եռագոյն դրօշը, որ թէկուզ չէր ծածանում հայրենիքում, իր տեղը գտաւ տանեակ այլ երկրների դրօշների շարքին:

Կեանքի ասպարէզի բերումով, Հրայրը իր տիկնոջ հետ, 1981ին փոխադրւում է Փարիզ: Մէկ անգամ եւս մխրճւում է Հ.Մ.Լ.Մ.ի աշխատանքների մէջ. այս անգամ նպատակ ունենալով վերականգնել ու լուծարքի վտանգից փրկել Ֆրանսայի սկստական շարժումը: Հրայրի դեկավարութեամբ եւ իր իւրաքանչեւ ու բծախնդիր գործելակերպով, հետագայ տարիները դառնում են կենսական եւ դարձեալ բարգաւաճում են Հ.Մ.Լ.Մ.ի շարքերը: 1989 թուականին Հրայրը յարմար առիթ է նկատում. դիմում ու ապահովում է UNESCO-ի համազործակցութիւնը եւ կազմակերպում է նոր ժամանակներում առաջին անգամ հայրենիքում տեղի ունեցած Հ.Մ.Լ.Մ.ի սկստական բանակում, որը դարձաւ անկիւնաքարը Հ.Մ.Լ.Մ.ի մայր հայրենիք վերադարձին:

1990ին Հրայրը ընտանիքով տեղափոխւում է Ա.Մ.Ն. ու լայնօրէն աշխատում ու ծառայում է Հ.Յ.Դ. կուսակցական գաղափարներին, մինչեւ իր կեանքի վերջին վայրկեանները:

Հ.Մ.Ը.Մ.Ը ՄԵՐ ՍՐՏԵՐՈՒՆ ՄԷՋ ...

Շարունակուած՝ 11րդ էջէն

Ի՞նչպէս կրնան վերադառնալ Հ.Մ.Ը.Մ.Ի Հայէպի Ֆութպոլի փառքի օրերը:

- Նախ, որպէսզի լաւ խաղացող ունենանք, մենք պէտք է ֆութպոլի դաշտ ունենանք: Անհրաժեշտ է նաեւ ներկայութիւնը փորձառու մարզիչներու, որոնք կարենան պատրաստել կրտսեր խոստումնայից մարզիկներ: Մեր օրերուն կային սկաուտական ֆութպոլի խումբեր, որոնք միշտ խաղացողներ կը պատրաստէին եւ կը հասցնէին ներկայացուցչական կազմ: Ներկայիս դարձեալ պէտք է զարկ տրուի այդ աշխատանքներուն եւ սկաուտական ֆութպոլի խումբերը մարզըին մասնագէտ ֆութպոլիստ մարզիչներու կողմէ, որոնք ատակ ըլլան խաղացողներ պատրաստելու: Ճիշդ է, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Հայէպի ֆութպոլի ներկայ խումբին մէջ կան օտար մարզիկներ, բայց երբ ունենանք կրտսերներու լաւ խումբեր,

վստահ որ պիտի ունենանք լաւ ապագայ խոստացող ֆութպոլիստներ, որոնք պիտի վերադարձնեն Հ.Մ.Ը.Մ.Ի ախոյեանական տիտղոսներու փառքի օրերը:

Եղբւրքերս՝ Անդրանիկ, աւելցնելիք խօսք մը ունի՞ք:

- Իմ խնդրանքս է, որ Հ.Մ.Ը.Մ.Ի խաղացողները խաղան Հ.Մ.Ը.Մ.Ին համար եւ ապա մտածեն այլ հարցերու մասին: Համաշխարհային զետնի վրայ ֆութպոլը հիմնական մարզախաղներէն մէկն է, եւ չկայ ակումբ մը, որուն մէջ ֆութպոլ գոյութիւն չունենայ: Հ.Մ.Ը.Մ. երկար տարիներէ ի վեր ճանչցրած է ֆութպոլի իր խումբով: Իմ փափաքս է, որ օր մը Հ.Մ.Ը.Մ.ը կրկին վերադառնայ իր նուաճումներուն եւ վերստին նուաճէ ախոյեանական տիտղոսներ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՎԷՊԻ ԱԿՈՒՄԲԸ

Շարունակուած՝ 13րդ էջէն

Ու դեռ, չեմ խօսիր այլազան ժողովներու, մտային աշխատանքներու, գրադարաններու, փինկ-փոնկի սեղաններու եւ այլ խաղերու տուած զբաղումներուն մասին, որոնք մաս կը կազմէին ակմբային կեանքին: Նաեւ, երիտասարդութիւնը մեծապէս հետաքրքրուած էր ազգային կեանքով: Իրապէս գնահատելի եւ ուրախայի էր անոնց մօտեցումը: Բայց այս բոլորին մէջ գազաթը, այդ բոլորին մէջ ամէնէն ժողովրդայինը, այդ բոլորին ամէնէն հետաքրքրականը, փառք ու պատիւ բերող Հ.Մ.Ը.Մ.Ի ֆութպոլի մրցումն էր՝ հազար-հազարներու նախասիրածը, հազար-հազարներու կուռքը: Կիրակի օրով, ֆութպոլի մրցումին, խումբը յաղթէր թէ պարտուէր, ակումբը պիտի լեցուէր: Ակումբը ծոցը պիտի բանար, սիրտը պիտի բանար եւ հազարաւոր մարդոց տեղ պիտի տար: Ու այդ գիշեր ակումբը պիտի շէննար: Ու այդ գիշեր ակումբը պիտի թնդար այդքան մարդու բացագանչութիւններէն, «հուռա՛, հուռա՛» կանչերէն: Ակումբը մաս կը կազմէր այդքան մարդու ուրախութեան, այդքան մարդու հայանալուն: Ու այդ էր կարեւորը: Ու այդ էր ակումբին գլխաւոր դերը: Նաեւ, այդ էր Հ.Մ.Ը.Մ.ը յաջողութեան տանող առաջնորդը: Հ.Մ.Ը.Մ.Ի իւրաքանչիւր յաղթանակին, իւրաքանչիւր բաժակին հազար-հազարներ կը հայանային, հազար-հազարներ փառք ու պատիւ կու տային Հ.Մ.Ը.Մ.Ին:

- Հայ՛ եմ ես, հայ՛ եմ ես, Քա՛ջ Վարդանին թո՛ւն եմ ես: Այդ ի՛նչ անոյշ օրեր էին: Մարդակերտումի, հայակերտումի այդ ի՛նչ հիանալի օրեր էին: Ակումբը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի թիւէլի ակումբը, տակաւին կայ ու կը գործէ: Շատերու յիշողութեան մէջ դեռ կ'երգէ, դեռ կը պարէ: Ու թեւեր առած՝ կ'երթայ Մոսկ, Սասուն: Կ'երթայ Գէորդ Չաւուշի շիրիմին ու կը ձայնէ:

- Գէորդ, լաօ, ե՛լ, ե՛լ երթանք տուն, երթանք Սասուն՝ հայոց աշխարհը կարօտ է քու քաջութեան, կարօտ է քու սիրանքին: Ե՛լ...:

Աստուած՝ իմ, երգի, բերքի այդ ի՛նչ անոյշ օրեր էին, հայկական այդ ի՛նչ աննման տղաք էին, որոնք եկան ու գացին ինչպէս երազ: Բայց անոնց յիշատակը դեռ կը մնայ, դեռ կը խօսի շատերու հոգիին մէջ՝ իբրեւ հեթիմ, իբրեւ անցեալէն եկած զրոյց անմոռանալի:

Այս էր իմ տեսած ու ապրած Հայէպի Հ.Մ.Ը.Մ.Ի ակումբը: Գուցէ, կեանքի պայմաններու բերումով, շատ բաներ մոռցած ըլլամ: Բայց ակումբը՝ Հ.Մ.Ը.Մ.Ի յաղթանակ կերտող ակումբը, ուր սովորութիւն դարձած էր գործէն արձակուելէ ետք, տուն չգացած, գործի հագուստով գալ՝ ընկեր-բարեկամ տեսներու, զրուցելու, նարտի խաղալու, վիճելու... Բայց տուն կը դառնային՝ վաղը նորէն գալու, վաղը դարձեալ գիրար տեսներու տեսլականով: Տուն կը դառնային... աւելի հայացած, աւելի հաւատաւոր, աւելի վճռական...:

Ո՛վ հայ մարդ, այս հեռաւոր ափերուն վրայ, այդ ակումբը տուր մեզի:

Ու այդ գիշեր, յաղթանակէն տուն դարձի ճամբուն վրայ, հազարաւոր հայորդիներ, ֆետայական երգերով ուրախ, կը թնդացնէին հայակերտ Նոր Գիւղը՝ պզտիկ Հայաստանը, հայրենակարօտ հայր...:

Այդ գիշեր օրօրոցի մանուկն անգամ ոտքի կանգնած կը գոռար:


ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- 1.«Ֆորմիլա 1»ի ֆինլանդացի մրցավարորդ:
- 2.Կիլիկեան քաղաք - Պատմական մարզ՝ Սպանիոյ մէջ:
- 3.Կրկնուած բաղաձայններ - Դահլիճ - Այտ:
- 4.Ասիական երկիր - Տառի մը անունը:
- 5.Անձնական դերանուն - Ժխտական մասնիկ - Եզրահան:
- 6.Քրիստոս հո'ն հարսնետր էր - Եւրոպական գետ:
- 7.Այեր - Արգատ - Անգլիտակից մղում:
- 8.Լեցուն - Կոխելով պնդացած - Տարի:
- 9.Ստացական ածական - Ռուս թենիսփուժըն:
- 10.Ապացոյց - Ինք - Լեռնալիբանանի ամարանոցներէն:
- 11.Աւրուիլ - Յուցական ածական - Արական օտար անուն:
- 12.Պարսելոնայի շուէտացի ֆուլթպոլիստը:
- 13.Սարսափ - Աչքի ծիածան - Յուցական ածական:
- 14.Մարոքեան քաղաք - Տարիք:
- 15.Իր վարդազոյն տուֆով նշանաւոր՝ հայկական քաղաք:
- 16.Պարիսպ խորտակող գործիք - Ժամանում:
- 17.Կեռ - Սպանիոյ քաղաքներէն:
- 18.Օղակ - Արեւելեան իջեւան - Մէկուն դէմ չարիք նիւթել:
- 19.Ջրային թռչուն - Եւփիմէ Աւետիսեանի գրչանունը - Ափրիկեան երկիր:
- 20.Բոյսի մասերէն - Նուաստ - Կենդանական սննդանիւթ:


ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

- 1.Իտալիոյ ֆուլթպոլի ազգային խումբին մարզիչը - Յետոյ:
- 2.Արական օտար անուն - Փոխարէն - Արդի:
- 3.Կանացի կոչական բառ - Պատարագի բաժակ - Պատ:
- 4.Խօսք մտիկ ըրէ - Փոթոթահամ - Անսահման:
- 5.Նորապսակ կին - Մայթ - Նախաճաշիկ:
- 6.Կարող - Հեռացիր - Ամուսնացած կին:
- 7.Տէրտէր - «Ոսկեմայր» կոչուած հայ դիցուհի - Ողբ:
- 8.Ստացական ածական - Մանրագիր - Հայաստանի քաղաքներէն - Հաստատական պատասխան:
- 9.Մանգաղի կոթ - Հայկական առաջին թերթը հո'ն լոյս տեսաւ - Կրկնուած գիրեր - Կանգուն երկնաքար (հակ.):
- 10.Հայկական խազ մը - Վայրի նարդոս - Նպաստաւոր կողմնորոշում - Չայնանիչ:
- 11.Սարմէնի երկերէն - Կանխ (հակ.) - Պապական նուիրապետութեան կեդրոնը:
- 12.Դրկից տառեր - Ասպատակ - 322 կղզիներէն բաղկացած երկիր՝ Խաղաղականի մէջ - Փոքրացնող մասնիկ - Ֆրանսական քաղաք:
- 13.Ճափոնական օդանաւային ընկերութիւն մը - Ստացական ածական - Ակոյս:
- 14.Գոյնզգոյն նուրբ թիթեղներէ կտրուած բոլորակ հատեր - Սպանացի գեղանկարիչ:
- 15.Սոդոմի բախտակից քաղաքներէն - Լծորդութիւն - Իգական օտար անուն:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ





Մենք Մասիսին, Մասիսը մեզ՝ երազում ենք միշտ իրար,
Կուզենք իրար հասնել, գրկել, բայց չի թողնում դարը չար:

Յ. Շիրազ